

ՀԵՄՈՍՏԱՁԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴԵՂԵՐ

Օրգանիզմում **թրոմբագոյացման և թրոմբալուժից** համակարգերը գտնվում են դինամիկ հավասարակշռության մեջ, որի խախտումը կարող է բերել կամ արյունահոսկանության կամ թրոմբագոյացման բարձրացմանը: Յնարավոր է նաև այդ երկու գործընթացների գուգորդումը՝ տարածված ներանոթային նակարդման համախտանիշի տեսքով (ՏՆՄ): Մակարդման խանգարումների կոնպլեքսային բուժման ժամանակ պետք է վերացնել նաև այդ խանգարումների պատճառները՝ հիպօքսիան, թթվագարությունը, բորբոքումը և այլն:

Հեմոստազի կարգավորմանը մասմակցում են.

1) ընդերածին հեմոստատիկները, որոնք կանխում և դադարեցնում են արյունահոսությունը ի շնորհիվ անորների կառուցվածքային ամբողջականության պահպանման և վնասված անորներում ընթացող թրոմբագոյացման: Այս ամենը կանխում է արյան կորուստը, ինչը ապահովում է օրգանների նորմալ արյունամասակարարումը և ամիրաժշտ շրջանառող արյան ծավալը; 2) հակաթրոմբոցիտար նյութերը, որոնք պահպանում են արյունը հեղուկ վիճակում, ապահովելով օրգանների և հյուսվածքների համարժեք արյունահոսքը:

Հեմոստազը իրագործվում է հիմնականում իրար միջև փոխագորոյ Յ ֆունկցիոնալ-կառուցվածքային քաղաքամասների օգնությամբ: Այդ քաղաքամասներն են. 1) անորների պատը (առաջին հերթին ներանոթներն, որը ապահովում է անորասեղմումը և վնասվածքից վեր շունթերի բացումը; 2) արյան քիչները (առաջին հերթին թրոմբոցիտներ և էրիթրոցիտներ); 3) պլազմային ֆերմենտային համակարգերը՝ մակարդման, ֆիբրինոլիտիկ, կալիկրեհ-կիմիային և այլն:

Համակարգը ենթարկվում է բարդ նյարդա-հումորալ կարգավորման և նրանում հստակ գործում են դրական (ինքնախթանում) և բացասական (արյան հակաթրոմբոցիտար պոտենցիալի բարձրացում) հետադարձ կապի մեխանիզմները: Այդ մեխանիզմները ստեղծում են պայմաններ մակարդման սահմանափակման համար, որի հետևանքով թրոմբագոյացման հատվածում այդ համակարգի տեղային խթանումը վերոնշված մեխանիզմների ծիծու գործումներում չի վերածվում ընդհանուր արյան մակարդման:

Հեմոստազը ընթանում է 5 փուլերով. 1) Անորային փուլ, որը դրսևորվում է անոթի վնասման հատվածից վեր անորակելիքամբ, ինչը կարող է ժամանակավորապես դադարեցնել արյունահոսությունը: Որոշ պրոագրեզանտների ազդեցության մեխանիզմում որոշակի դեր կարող է խաղալ նրանց ունակությունը առաջացնել անորակելիքում (սերոտոնին սինթետիկ նեղապատրաստուկներ); 2) Թրոմբոցիտների աճակցման և ագրեգացիայի փուլ: Այս փուլում ծևավորվում է առաջնային, անկայուն մակարդուկը կամ սպիտակ թրոմբը, որը հիմնականում բաղկացած է ֆիբրինից: Այս փուլում մակարդուկը կամ սպիտակ թրոմբը, որը հիմնականում բաղկացած է թրոմբոցիտներից: Պրոագրեզանտների և հակագրեզանտների ազդեցության թիրախն է; 3) Մակարդման փուլ, որը ընթանում է երեք ծանապարհով. արտաքին, ներքին և ընդհանուր: Այս փուլում առաջանում է երկրորդային, կայուն մակարդուկ կամ կարմիր թրոմբ, որը հիմնականում բաղկացած է ֆիբրինից: Այս փուլը մակարդուկների և հակամակարդիչների ազդեցության թիրախն է: 4) Մակարդուկի կրծատման փուլ, որը կարևոր դեր է խաղում վնասված հատվածի վերականգնման գործում; 5) Մակարդուկի կազմալուծման փուլ, որը կոչված է վերականգնել վնասված անոթի նորմալ անցանելիությունը, կազմալուծելով վնասված անոթի լուսանցքը նեղացնող մակարդուկը: Այս փուլը ֆիբրինոլիտիկ դեղերի թիրախն է:

ՀԵՄՈՍՏԱՁԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴԵՂԵՐԻ ԴԱՍԱԿՐՈԳՈՒՄԸ.

1. ՅԱԿԱԹՐՈՍՔՈՉԱՅՑԻՆ ԴԵՂԵՐ

1.1 ԿԱԿԱԳՐԵԳԱՆՏՆԵՐ

1.1.1 ԱՐԱԽԻԴՈՆԱԹԲՎԻ ԾՅՈՒԹԱՎԻԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿՃՈՂՆԵՐ

1.1.1.1 ցիկլօքսիգենազի ընկճողներ (ասպիրին, ինդոքրոֆեն, տրիֆլուզալ);

1.1.1.2 թրոմբօքսան սինթազի ընկճողներ (դազոքսիբեն, օզագրեն);

1.1.1.3 թրոմբօքսան ԱՀ-ընկալիչների և թրոմբօքսան սինթազի ընկճողներ (րիդոգրել, նիդոգրել, այկուտամիդ);

1.1.2 ՑԻԿԼԻԿ ԾՈԼԿԵՌՈՒԹԻՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԳԱՆՈՂՆԵՐ

1.1.2.1 արենիլատ ցիկլազի խթանում (PGI_2 համանմանները՝ իլոպրոստ, էպոպրոստենոլ; PGE_1 համանմանը՝ ալպրոստադիլ);

1.1.2.2 ֆունֆիտերերազի ընկճում (թենֆիլին, դիպիրիդամոլ);

2.1.3 ԱԼԿԱՎԱԳՄԱՆ ԸՆԿԱԼԻՀՆԵՐԻ ԱՎԱՉԱՐՈՂՆԵՐ

1.1.3.1 ADP-ի ընկալիչների ընկճում (տիկլոպիրին, կլոպիրոգրել);

1.1.3.2 թրոմբինի ընկալիչների ընկճում (պետիթային համանմաններ);

1.1.3.3 սերոտոնինի ընկալիչների ընկճում (կետանսերին);

1.1.4 ԱԳՐԵԳԱՑԻԱՅԻ ԸՆԿՃՈՂՆԵՐ. Ֆիբրինոգենի GPIIb-IIIa ընկալիչների պաշարում (արցիքսիմար, էպտիֆիբատիդ, ագրաստատ, թիրոֆիբան);

1.1.5 Աճակցման ընկճողներ

1.1.5.1 Վիլեբրանդի գործոնի ընկալիչների (GP Iб-V-IX) պաշարում (Վիլեբրանդի գործոնի Ա₁ դոմենի հետ կապվող վերախնբավորված պեպտիդներ);

1.1.5.2 կոլագենի ընկալիչների պաշարում (վերախնբավորված պեպտիդներ; յուրահատուկ հակամարդներ);

1.2 ՀԱԿԱՍԱԿԱՐԴԻՉՆԵՐ

1.2.1 ուղղակի ազդող (հեպարիններ՝ ցածրամոլեկուլյար և բարձրամոլեկուլյար);

1.2.2 անուղղակի ազդող (վիտամին K-ի ներհակորդներ՝ նեռոդիկուլարին, սինկուլար);

1.2.3 հիռուղին և թրոմբինի այլ ուղղակի ընկճողներ;

1.2.4 ակտիվացած C սպիտակուց

1.3 ՖԻԲՐԻՆՈԼԻՖԻԿՆԵՐ (ալազմին, ստրեպտոկինազա, ուրոկինազա, ակտիլիզեր)

2. ԴԵՍՈՍՏԱՌԻԿՆԵՐ

2.1 ՊՐՈՍԳՐԵՎԱՍՏՆԵՐ (աղրոքստն, էտամզիլատ, սերոտոնինի և կալցիումի դեղապատրաստուկներ);

2.2 ՍԱԿԱՐԴԻՉՆԵՐ (թրոմբին, ֆիբրինոգեն, վիտամին K-ի դեղապատրաստուկներ);

2.3 ՀԱԿԱՖԻԲՐԻՆՈԼԻՖԻԿՆԵՐ (ամինոկապրոնաթրու, պրոթեազմերի բնական ծագման ընկճողներ):

1.1 ՀԱԿԱՍԳՐԵՎԱՍՏՆԵՐ

1.1.1 ԱՐԱԽԻԴՈՆԱԹՐՈՎԻ ՆՅՈՒԹԱՓՈԽԱՍՎԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿՃՈՂՆԵՐ

1.1.1.1 Ց Կ Լ Օ Ք Ս Ի Գ Ե Ն Ա Զ Ի Ը Ն Կ Շ Ո Ղ Ն Ե Ր (ՑՕԳ)

ԱՍՊԻՐԻՆ

ՖԱՐՄԱԿՈԴԻՆԱՄԻԿԱ. Ընկճելով տարբեր պրոստագլամինների սինթեզը՝ ասպիրինը և այլ ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերը (NSAIDs), ընկճում են թրոմբոցիտային ծերբազատման ռեակցիան և խախտում են թրոմբոցիտների նորմալ ագրեգացիան: Ինչպես թրոմբոցիտների, այնպես էլ ներանոթենու բջջների ակտիվացումը նակածում է ֆուֆոլիպազ Ա₂-ը (PLA₂), որը տրոհում է թաղանթային ֆուֆոլիպիդները և ծերբազատում է արախիդոնաթրու: Վերջինս վերածվում է ցիկլիկ էնդոպերօքսիդենազ (ՑՕԳ) ֆերմենտի ազդեցության տակ: Թրոմբոցիտներում ցիկլիկ էնդոպերօքսիդը վերածվում է մի շարք պրոստագլամինների, որոնցից գլխավորը թրոմբոքսան Ա₂-ն (TxA₂): Ազդելով բջջի մակերեսին տեղակայված TxA₂-ի ընկալիչի վրա, TxA₂ առաջացնում է տեղային անոթակծում և համարվում է թրոմբոցիտների ագրեգացիայի և թրոմբոցիտային ծերբազատման ռեակցիայի հզոր մակածող: Ներանոթենու բջջներում ցիկլիկ էնդոպերօքսիդը վերածվում է մի շարք պրոստագլամինների, որոնցից գլխավորը պրոստացիկլինն է (PGI₂): PGI₂, իր հերթին, առաջացնում է տեղային անոթալայնացում և ընկճում է թրոմբոցիտների ագրեգացիան և թրոմբոցիտների ծերբազատման ռեակցիան:

Ասպիրինը ազդում է ացետիլացմելով կովալենտային կապի հաստատմամբ COX ֆերմենտի ակտիվ հատվածի հարևանությամբ գտնվող սերինային մնացողողը, դրանով իսկ ընկճում է ցիկլիկ էնդոպերօքսիդների և նրա տարբեր նյութափոխանակային արգասիքների սինթեզը: TxA₂ բացակայության պայմաններում նկատվում է թրոմբոցիտների ագրեգացիայի և թրոմբոցիտների ծերբազատման ռեակցիայի զգալի նվազում: Քանի որ թրոմբոցիտները չունեն ԴՆԹ և ՌՆԹ, այդ բջջները ի վիճակի չեն վերականգնել նոր COX ֆերմենտը, երբ ասպիրինը կայուն ծնող ակտիվացերծում է առլաս COX ֆերմենտի ամրող զանգվածը: Այլ կերպ ասած, թրոմբոցիտները 7-10 օր տևող իրենց ամրող կյանքի ընթացքում դառնուու են անդարձելիորեն “թունավորված”: Չնայած նրան, որ ասպիրինը ընկճում է նաև ներանոթենու բջջներու: Քանի որ ասպիրինը ոչ ընտրողաբար ընկճում է COX-1 և COX-2 ֆերմենտի իզոները, նրա ազդեցությունը կայուն կերպով չի դրսնորվում այդ բջջներում, քանի որ նրանք ունակ են սինթեզել COX ֆերմենտի նոր մոլեկուլներ: Այսպիսով, ներանոթենու բջջների կողմից պրոստացիկլինի արտադրումը համեմատորեն չի ենթարկվում ասպիրինի ցածր դեղաչափերի ազդեցությամբ: COX-1-ը ցիկլոօքսիգենազ ֆերմենտի գերակշիր իզոնեն է թրոմբոցիտներում և ներանոթենու բջջներու: Քանի որ ասպիրինը ոչ ընտրողաբար ընկճում է COX-1 և COX-2 ֆերմենտի իզոները, այս դեղը կիրառվում է դրանք արդյունավետ հակաբոքորդոցիտար դեղամիջոց: Ընդհակառակը, նոր սինթեզված ընտրողական COX-2 ընկճումները չեն կարող կիրառվել դրանք հակաբոքորդոցիտար դեղեր: Սակայն, դրանք հակաբոքորդային դեղամիջոցները կիրառելու ժամանակ COX-2 ընկճումները չեն դրսնորի անցանկալի հակաբոքորդոցիտար էֆեկտներ, ինչը նկատվում է ասպիրինի հակաբոքորդային ազդեցության հետ գուգահեռ:

Ասպիրինը, անդարձելիորեն ընկճելով COX ֆերմենտը, դարձնում է արախիդոնաթրու ավելի մատչելի մրցակցային լիազօքիգենազային նյութափոխանակային ուղղու համար, որտեղ առաջանում է հակագրեգանտային ակտիվությամբ օժտված հիդրօքսիպերօքսիդէկոզատերակենային թրու (HPETE): Դարկավոր է նշել, որ արախիդոնաթրու իմբն օժտված է պրոագրեգանտային ակտիվությամբ, իսկ

ասպիրինը կարող է շատացնել արախիդոնաթթվի քանակությունը: Բացի այդ, HPETE-hg կարող է սինթեզվել պրոստացիկլին:

ՖԱՐՄԱԿՈԿԻՆԵՏԻԿԱ. Ասպիրինը ներմուծում են մարսողական ճանապարհով 81-325 մգ դեղաչափով օրական մեկ անգամ, մինչդեռ այդ դեղի սովորական հակաբորբոքային դեղաչափը կազմում է 650 մգ օրական 3-4 անգամ:

ԿԻՐԱԿՈՌԻՄ. Ասպիրինը առավել հաճախ օգտագործում են որպես **հակաագրեգանտային** միջոց հնսուլտի, անցողիկ իշեմիկ գրոհների և սրտամկանի ինֆարկտի զարգացմանը բերող զարկերակային թրոմբոզը կանխելու համար: Քանի որ ասպիրինի ազդեցությունը թրոմբոցիտների վրա կայուն է, ցածր դեղաչափերով կամ ոչ հաճախակի նշանակումների դեպքում նա առավել արդյունավետ է որպես ընտրողական **հակաագրեգանտային** միջոց: Ասպիրինը բարձր դեղաչափերով կարող է ընկճել պրոստացիկլինի սինթեզը՝ չբարձրացնելով հակաբրոնթրոցիտար ազդեցության արդյունավետությունը: Ասպիրինի հետ համեմատ, այլ NSAIDs լայն տարածում չեն գտել զարկերակային թրոմբոզի կանխման համար, քանի որ նրանց ընկճող ազդեցությունը COX ֆերմենտի վրա կայուն չէ:

ԿՈՂՄԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. Հակաագրեգանտ դեղաչափերից ի հայտ եկող ամենահավանական էֆեկտներն են. բրոնխիալ ասթմայի ընթացքի սրացումը և ալերգիկ ռեակցիաների զարգացումը:

8ԻԿԼՕՔՍԻԳԵՆԱԶԻ ԱՅԼ ԸՆԿԵՐՈՂՆԵՐ

ԻՆԴԻՔՈՒՖԵՆԸ բրոմբոցիտների ցիկլօքսիգենազ ֆերմենտի դարձելի ընկճող է: Նա ընկճում է TXA₂ արտադրությունը և Աերկֆ, աղբենալինով և PAF-ով մակածված ագրեգացիայի երկրորդ փուլը: Բացի այդ, դեղը առաջացնում է կոլագենով, արախիդոնաթթվով մակածված թրոմբոցիտների ագրեգացիայի դեղաչափ կախյալ ըմկճում: Ինդրուֆենը նվազեցնում է ԱԵՖ-ի, սերոտոնինի, թրոմբոցիտների 3 գործոնի, թրոմբոցիտների 4-գործոնի, α-թրոմբոնդրուլինի մակարդակները, կանխում է բջիջների աճակցումը, սակայն չի երկարացնում արյունահոսության ժամանակը: Ինդրուֆենը կանխում է թրոմբոցիտների աճակցումը թաղանթների վրա հենոդիալիզ անցկացնելիս: Օրական դեղաչափը կազմում է 200-400 մգ: Ինդրուֆենը սապիրինից արդյունավետ է ծայրամասային անորմերի արերուվերուտիկ ախտահարումների բուժման ժամանակ և չի զիջում վերջինիս և այլ հակաագրեգանտներին որպես կանխարգելիչ միջոց ուղեղի անորային կիվանդությունների, երակային թրոմբոզի ժամանակ, ինչպես նաև արտա-կորոնար շունթերի խցանման կանխարգելման գործում:

ՏՐԻՖԼՈՐԱՎԱԾ ամենա հեռանկարային հակաագրեգանսն է, որը գերազանցում է սապիրինին իր ակտիվությամբ: Թիմիական կառուցվածքով նման է սապիրինին: Տրիֆլուզալը անորմելի ընկճում է թրոմբոցիտների ՅՕԳ ֆերմենտը, սակայն, ի տարբերություն սապիրինի, գործնականում չի ազդում ներանոթենու ՅՕԳ ֆերմենտի ակտիվության վրա: Տրիֆլուզալը ընկճում է ՖԴՇ ֆերմենտի ակտիվությունը, բարձրացնելով ցիկլիկ ԱՄՖ-ի մակարդակը (թրոմբոցիտների ակտիվացման ընկճող): Բացի այդ, դեղը խթանում է ազոտի օքսիդի (NO) առաջացումը և ընկճում է սուլֆերօքսիդի սինթեզը նեյտրոֆիլներում: Դեղը ընկճում է նաև NF-κB տրանսկրիպտորային գործոնի էքսպրեսիան, որը ներանոթենու բջիջներում կարգավորում է աճակցման մոլեկուլների տրանսկրիպցիան (օրինակ, VCAM-1): Դարկավոր է նշել, որ տրիֆլուզալի դեացետիլացման արգասիքը ակտիվ նյութ է հանդիսանում և կարող է ինչպես պոտենցիել բնական դեղի (տրիֆլուզալի) ազդեցությունը, այնպես էլ ինքնուրույն ընկճել թրոմբոցիտների ՅՕԳ ֆերմենտը՝ անուղղակիրեն բարձրացնելով ներջջային ցիկլիկ ԱՄՖ-ի մակարդակը: Արանով է, միգուցե, բացատրվում տրիֆլուզալի բարձր հակաագրեգանտային ակտիվությունը սապիրինի հետ համեմատած: Առավել հաճախ հանդիպող կողմնակի էֆեկտներից են նողկանքը, փսխումը, ցավերը և պիգաստրալ շրջանում և այրոցի զգացում որոշորի շրջանում:

1.1.1.2 ԹՐՈՄԲՈՔՍԱՍ ՄԻՆԹԱԶԻ ԸՆԿԵՐՈՂՆԵՐ

ԴԱԶՈՔՄԻՔԵՆ, ՕՉԱԳՐԵԼ

ՖԱՐՄԱԿՈԴԻՆԱՍԻՆԿԱ. Ի տարբերություն սապիրինի նրանք կանխում են TXA₂ առաջացումը, չագրելով պրոստագլամինների սինթեզի վրա էնդոքրելու: Բացի այդ, նրանք շատացնում են պրոստացիկլինի առաջացումը, քանի որ կուտակված հիդրոէնդոքրօսիդը PGH₂-ը կարող է վերածվել PGl₂, PGD₂, PGE₂, PGF_{2α} պրոստացիկլինինքազ, պրոստագլամին D₂ իզոմերազ, պրոստագլամին E₂ իզոմերազ, պրոստագլամին F_{2α} ռենուկտազ ֆերմենտների ազդեցության տակ, համապատասխան: Ցավոք սրտի, թրոմբոքսան սինթեզի սպեցիֆիկ ընկճումը բերում է ոչ միայն PGH₂-ի, այլ նաև ցիկլիկ էնդոքրօսիդային պրոստագլամինների (PGD₂, PGF_{2α}) կուտակմանը, որոնք, դրսնորելով պրոագրեգանտային ակտիվություն (TXA₂ ընկալիչների խթանում), նվազեցնում են PGl₂ և PGE₂ հակաագրեգանտ էֆեկտները: Ասպիրին, մի շարք հետազոտություններում բացահայտվել է այս դեղերի ցածր հակաագրեգանտային ակտիվությունը, ինչը սահմանափակում է նրանց կլիմիկական կիրառումը:

1.1.1.3 ԹՐՈՄԲՈՔՍԱՍ Ա ԸՆԿԱԼԻՉՆԵՐԻ և ԹՐՈՄԲՈՔՍԱՍ ՄԻՆԹԱԶԻ ՊԱՏԱՐՈՂՆԵՐ

ՐԻԴՈԳՐԵԼ, ՆԻԴՈԳՐԵԼ, ՊԻԿՈՏԱՍԻԴ:

TXA₂ ընկալիչների պաշարողները ընկծում են թրոմբոքսանի և էնորգերօքսիդների կապումը թրոմբոցիտների **TXA₂** ընկալիչների հետ և կանխում են **TXA₂-շ** անոքասեղմիշ ազդեցությունը: Այս դեղերը հանդիսանում են **TXA₂** ընկալիչների ընտրողական ներհակորդները և չեն ազդում **TXA₂** և պրոստացիկլինի կենսասինթեզի վրա: Սակայն նրանք դրսուրում են շատ ցածր արդյունավետություն և հարցականի տակ է դրվում նրանց կլիմիկական կիրառման նպատակահարմարությունը:

Թրոմբոքսան **U2** ընկալիչներ պաշարողներ (*SQ 29548, SQ 30741*) չեն կիրառվում կլիմիկայում, քանի որ շատ արագ ենթակվում են նյութափոխանակության և չեն կարող երկարատև կիրառվել: Մեկ այլ **TXA₂ ընկալիչների պաշարող՝ BMS-180291** օժտված է երկարատև ազդեցությամբ և կարելի է նշանակել մարտողական ծանապարհով: **TXA₂ ընկալիչների ընտրողական պաշարող՝ սուլուտորպանը (800գ օրական 4 անգամ)** դրսուրել է արդյունավետություն սրտամկանի կրկնակի ինֆարկտի զարգացման կանխարգելման մեջ:

Այժմ հետազոտվում են կրկնակի ազդեցության մեխանիզմով օժտված դեղեր, որոնք և նվազեցնում են թրոմբոքսան սինթազի ակտիվությունը (նայիր 1.1.1.2), և պաշարում են **TXA₂** ընկալիչները, որոնք ցց սպիտակուց-կախյալ են: Այս ընկալիչների ակտիվացումը բերում է ֆուֆոլիպազ C-ի ակտիվացմանը, ինչը բարձրացնում է ներքջային **Ca²⁺** իոնների խոռոքյունը ի շնորհիվ հինողիուղ եռփոսֆատի և դիացիլգիցերողի ազդեցության: **Ca²⁺** իոնների կուտակումը նպաստում է թրոմբոցիտների ագրեգացիայի խթանմանը (նայիր 2.1): Բացի այդ, **Ca²⁺** իոնները մասնակցում են ֆուֆոլիպազ **U2-ի** խթանման գործնաբացում, իսկ վերջին կարող է ակտիվացնել ագրեգացիայի գործնաբացներում կարևորագույն դեռ խաղաղությունը **GPIIb-IIIa** գլիկոպրոտեինները: Պաշարելով **TXA₂** ընկալիչները այս դեղերը կանխում են ագրեգացիայի խթանումը: Շիդոգրելը կարող է վերականգնել պակային զարկերակների անցանելիությունն սրտամկանի ինֆարկտի հետո: Նկատվել է այս դեղերի կիրառման դրական արդյունքը Ռենովի հիվանդության և իշեմիկ ինսուլտի բուժման ժամանակ:

ՖԻԿԼԻԿ ՆՈՒԿԼԵՈՏԻԴՆԵՐԻ ԱՌԱՋՎԵՆՈՂՆԵՐ

1.1.2.1 ԱԴԵՆԻԼԱՏ ՑԻԿԼԱԶԻ ԽԹԱՆԻՉՆԵՐ

ԻԼՈՊՐՈՊԱ, ԱԼՊՐՈՍՏԱԴԻԼ, ԷՊՈՊՐՈՊԵՆԵՆՈԼ

ՖԱՐՍԱԿՈԴԻՆԱՍԻՒԿԱ. Պրոստացիկլինը (**PGI₂**) թրոմբոցիտների ագրեգացիայի ամենահզոր բնական ընկծողն է: Բացի այդ, նա ուժեղ անոքալայնիչ է, ինչեցնում է զարկերակային ճնշումը և առաջացնում է հաճախարսություն: Պրոստացիկլինը ոչ միայն ընկծում է թրոմբոցիտների ագրեգացիան, այլ նաև քայլայում է թրոմբոցիտները շրջանառող արյան մեջ, ինչպես նաև ընկծում է թրոմբինի առաջացումը: **PGI₂** կապումը թրոմբոցիտների պլազմատիկ թաղանթում տեղակայված սպեցիֆիկ ընկալիչների հետ գուգորդվում է աղենիլացիկլազի խթանմանը, ինչը բերում է ներքջային ցիլիկ ԱՍՖ-ի քանակության բարձրացմանը: Ցիլիկ ԱՍՖ-ի քանակության շատացումը բերում է **Ca²⁺** իոնների պահեստավորմանը թրոմբոցիտներում թաղանթներում, ինչը բերում է ՅՕԳ-ի, ինչպես նաև ֆուֆոլիպիդներից արախիտոնաթթվից ձերբագատումը կատալիզող ֆերմենտի՝ ֆուֆոլիպազ **A₂-ի** ընկծմանը: Այսպիսով, **PGI₂** ընկծում է թրոմբոցիտների ագրեգացիան՝ ազդելով արախիտոնաթթվի նյութափոխանակության մի քանի փուլերի վրա: Բացի այդ, ցիլիկ ԱՍՖ-ի քանակության շատացումը բերում է ցիտոպոլային կալցիումական իոնների քանակության նվազմանը, ինչը բերում է հակագրեգանստային էֆեկտի զարգացմանը:

ՖԱՐՍԱԿՈԴԻՆԱՏԻԿԱ. **PGI₂** անկայուն միացություն է, մինչև 3 րոպե կիսաարտագատման ժամանակով, ուստի ներմուծում են ներքիային:

ԿԻՐԱՍՈՐԻՄ. Դրական արդյունք է նկատվել կայուն ստենոլարդիայի, ծայրամասային անոթների հիվանդությունների բուժման ժամանակ:

Այս խմբի բոլոր կիրառող դեղերը հակագրեգանստային ակտիվությամբ օժտված պրոստագլինների համանանաներն են, որոնք տարբերվում են իրենց ազդեցության տևողությամբ: Օրինակ, **PGI₂-ի** կայուն համանանաները (իլոպրոտատ և բենտապրոտատ) ունեն ազդեցության ավելի երկար տևողություն և նրանց կարելի է ներմուծել ինչպես ներքիային այնպես էլ մարտողական ծանապարհով: Ընկծում են **ADP**-ով, աղբենալինով և թրոմբինով նակածված թրոմբոցիտների ագրեգացիան:

Կարելի է կիրառել նաև թոքային հիպերտենզիայի ժամանակ և հեմոռիալիզ անցկացմելիս:

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. Առավել հաճախ հանդիպում են ստամոքս-աղիքային խանգարումներ, զարկերակային **հիպոտոնիա,** գլխացավ և մաշկային ցան:

1.1.2.2 ՖՈՍՖՈԴԻՍԹԵՐԱԶԻ ԸՆԿԵՐՈՒՄՆԵՐ

ԴԻՊԻՐԻԱՍՈՒԼ

ՖԱՐՍԱԿՈԴԻՆԱՍԻՒԿԱ. Թրոմբոցիտներում ներքջային ցիլիկ աղենոզին մոնոֆուֆատի (**ԱՍՖ**) խտության բարձրացումը բերում է թրոմբոցիտների աղբեգացիոն ունակության նվազման: Թրոմբոցիտներում ցիլիկ ԱՍՖ-ի քանակությունը մերժական է աղբեգացիոն աղենոզին մերքջային ցիլիկ ԱՍՖ-ի քանակությունը: Այս մեխանիզմը, որով բարձրացած ներքջային ցիլիկ ԱՍՖ-ի քանակությունը բերում է թրոմբոցիտների աղբեգացիոն ունակության նվազմանը, դեռ լավ չէ պարզաբնակած: Ցիլիկ ԱՍՖ-ը ակտիվացնում է աղբենին կինազ և ֆերմնետը, որմ, իր հերթին, մի շարք լավ չպարզաբնակած մեխանիզմների շնորհիվ նվազեցնում է թրոմբոցիտների աղբեգացիոն համար անհրաժեշտ ներքջային **Ca²⁺-իոնների** քանակությունը: Թրոմբոցիտների ֆուֆոլիպերազ ֆերմնետը ընկծողները նվազեցնում են թրոմբոցիտների աղբեգացիոն ընկծումը գլիկ ԱՍՖ-ի տրոմբումը, մինչդեռ թրոմբոցիտների աղենիլացիկլազի խթանողները բարձրացնում են ցիլիկ ԱՍՖ-ի քանակությունը: Դեղը օժտված է թույլ

հակաթորմբոցիտար էֆեկտներով և, այդ իսկ պատճառով, սովորաբար նշանակում են հակամակարդիչ վարժարինի կամ հակագրեգանու ասպիրինի հետ զուգակցված:

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Լավ է ներծծվում ստամոքս-աղիքային ուղղուց: Լյարդում ենթարկվում է նյութափոխանակության:

ԿԻՐԱՊՈՐՄ. Դիպիրիդամոլի և վարժարինի զուգակցումը կիրառում են սրտի արհեստական կավիյուրից առաջացած էմբոլիզացիան կանխելու նպատակով, մինչեղու դիպիրիդամոլի և ասպիրինի զուգակցումը կիրառում են թրոմբոտիկ դիաբեզով տառապող հիվանդների մոտ թրոմբոզի զարգացման հնարավորությունը նվազեցնելու համար:

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐԸ. Դիպիրիդամոլը օժտված է անորալայիշ ակտիվությամբ: Նա պարուղուսալ ձևով կարող է մակածել կրծքի հեղծուվի նոպա պսակային զարկերակների հիվանդությամբ տառապող հիվանդների մոտ, առաջացնելով կողոպտնան ֆենոմեն, որի հիմքում ընկած է առողջ պսակային զարկերակների լայնացումը: Կարող է առաջացնել արյան ճնշման փոփոխություններ, սրտի կծկման հաճախականության փոփոխություններ, գլխապտույտ, գլխացավ, ցավ լյարդի շրջանում, մաշկային քոր:

ՊԵՆՏՈԹՍԻՖԻԼԻՆ.

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Պենտոքսիֆիլինը դիմեթիլքսանտինի ածանցյալ է, ընկճում է թրոմբոցիտների ագրեգացիան հետևյալ մեխամիզմների շնորհիվ:

1) ֆուֆոդիէպրեազայի ընկճում և ցՍՍՖ-ի շատացում; 2) պրոստացիկլինի սինթեզի խթանում; 3) էնորթելիալ քաջներում թրոմբոքսան A2-ի սինթեզի ընկճում: Բացի այդ պենտոքսիֆիլինը կարող է օժանդակել հակագրեգանու ագրեցությանը ի շնորհիվ. 1) արյան մածուցիկության նվազեցման; 2) հյուսվածքներում թքվածնի խտության մեծացման; 3) անորալայիշ ագրեցության:

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Նշանակում են մարտողական ճանապարհով, մ/ե և ներզարկերակային: Սարտողական ճանապարհով ընդունում են 0.2 գրամ օրական 3 անգամ ուտելուց հետո:

ԿԻՐԱՊՈՐՄ. 1) ընդմիջվող կաղություն; 2) ինսուլտի և ուղեղի արյան շրջանառության անցողիկ խանգարումներ; 3) թրոմբոէնբոլիայի կանխում առոտա-կորոնար շունտավորումից և ծայրամասային անորմների վրա կատարած վիրահատությունից հետո; 4) ճանաչողական ֆունկցիաների բարելավում ինսուլտից հետո:

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐԸ. Անդկանք; ստամոքս-աղիքային խանգարումներ, որոնք անցնում են դեղաչափի նվազման կամ դեղը ուտելուց հետո ընդունելիս; գլխապտույտ, դեղքի կարմրություն; արյան ճնշման նվազում:

ՑԻԼՈՏԱՁՈՒ

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Ցիլոստազոլը խինոլինային շարքի դեղ է, որը ընկճում է ֆուֆոդիէպրեազ III-ը: Նա արդյունավետ ընկճում է Աերկֆ-ով, արախիդոնաթքվով, կոլագենով, ադրենալինով, թրոմբոքսան Աշ-ով խթանված թրոմբոցիտների ագրեգացիան: Ցիլոստազոլը օժտված է հետևյալ հատկություններով. 1) անորթալայիշ ի հաշիվ անորմների հարք մկանների վրա ուղղակի ագրեցության, որի հետևանքով կանխվում է կալցիումի իոնների ձերբագատումը ներքջային պաշարներից; 2) եռզիցերիդների մակարդակի նվազում; 3) շատացնելով մերբջային ցիկլիկ ԱՍՖ-ի քանակությունը ցիլոստազոլը ընկճում է հարք մկանների քաջացմանը;

ԿԻՐԱՊՈՐՄ. Օգտագործում են ծայրամասային անորմների հիվանդության ընդմիջվող կաղություն ժամանակ: Կակացուցված է սրտային անբավարության ժամանակ:

ՏՐԱՊԻԴ

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Դեղը ընկճում է Աերկֆ-ով, արախիդոնաթքվով, թրոմբինով և TXA₂ խթանված թրոմբոցիտների ագրեգացիան: Դեղը օժտված է ագրեցության բարդ մեխամիզմով, ներառյալ. 1) ֆուֆոդիէպրեազ I-IV տիպերի ընկճում; 2) անորթալայիշ, դրական ինտորոպ և քրոնոտրոպ ագրեցություն; 3) դիաստոլիկ ճնշման նվազում; 4) հիստամինի ձերբագատման ընկճում; 5) հարք մկանների թուցանակում; 6) հիպոլիպիդեմիկ և հակագրերուսկերություն ագրեցություն:

ԿԻՐԱՊՈՐՄ. Նշանակում են սրտի իշենիկ հիվանդության ժամանակ: Ասպիրինից արդյունավետ է մոնոթերապիայի կամ դիպիրիդամոլի հետ զուգադրությամբ տեսքով նշանակման ժամանակ կրկնվող սրենոզի կանխման նպատակով մաշկի միջով կատարած պսակային անդիոլաստիկայից հետո:

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐԸ. Կողմանակի էֆեկտներից են նողկանքը, փսխումը, ախտրժակի բացակայումը, էպիգաստրոալ շրջանում ցավերը և գլխացավը: Կազմակերպ կարող են նկատվել հորդանքներ, օրբուստափիկ հիպոտենզիա, մաշկային ալերգիկ ռեակցիաներ:

1.1.3 ԱԿՏԻՎԱՑՍԱՆ ԸՆԿԱԼԻՉՅՆԵՐԸ ՊԱՇԱՐՈՂՆԵՐԸ

1.1.3.1 ADP ԸՆԿԱԼԻՉՅՆԵՐԸ ԸՆԿԱԼԻՉԻՒՄ, ԿԼՈՊԻԴՈԳՐԵԼ

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Ինչպես տիկլոպիդինը (ticlopidine), այնպես էլ կլոպիդոգրելը (clopidogrel) թիենոպիրիդինների (thienopyridine) ածանցյալներն են: Այս դեղերը, որոնք անդարձելիորեն ընկճում են Աերկֆ-ից կախված թրոմբոցիտների ակտիվացման ուղին, դրանում են հակաթրոմբոցիտար ագրեցություն ինչպես *in vitro*, այնպես էլ *in vivo* պայմաններում: Տիկլոպիդինը և կլոպիդոգրելը ագրում են, կլովալենտ ծևով փոխելով և ակտիվազերծելով թրոմբոցիտների P2Y (ADP)-ընկալիչները, որոնք ֆիզիոլոգիորեն կապված են աղենիլատոցիկլազի ընկճման հետ: Թրոմբոցիտների ակտիվացման ժամանակ ցիտոպլազմատիկ բշտիկներից ձերբագատվող Աերկֆ-ի խթանում է այլ քաջները ևս, դրանով իսկ ուժեղացնելով ագրեգացիայի գործընթացը: Բացի այդ, վնասված անորի հարժանանությամբ գտնվող այլ

տիպի բջիջներից նույնապես ծերբազատվում է ԱԵՐԿՖ-ի հավելյալ քանակություն: Ներանոթենու ֆունկցիայի խանգարումը ուղեկցվում է արտաքջային ԱԵՐԿՖ-ը առաջ քայլայող ֆերմենտի ակտիվության նվազմամբ, ինչը բերում է վնասված անորի հատվածում ԱԵՐԿՖ-ի տեղային խոռոչան բարձրացմանը, ինչը ուժեղացնում է բրոմբոցիտների ագրեգացիան: Դայտնի է, որ ԱԵՐԿՖ-կախյալ բրոմբոցիտների ակտիվացիան կարևոր է խաղում գարկերակային թումբոզի պարոգենեզում, հատկապես ներանոթենու ֆունկցիայի խանգարման դեպքում:

Դեղի մարտողական ճանապարհով ընդունելուց հետո թիենոպահիդիմները լյարդում ենթարկվում են նյութափոխանակության՝ առաջացնելով ԱԵՐԿՖ-ային ընկալիչների հետ կապվող և բրոմբոցիտների խամումը անդարձելի ընկծող ակտիվ նյութափոխանակային արգասիքներ: Թիենոպահիդիմները ընկծում են ԱԵՐԿՖ-ի կապումը G-սպիտակուցի հետ կապված ցածր խնամակցություն ունեցող ընկալիչի հետ: ԱԵՐԿՖ-ային ընկալիչի պաշարման հետևանքով ցիկլիկ ԱՍՖ-ի քանակությունը բջջում չի նվազում, ինչը կանխում է GPⅡb-IIIa գլիկոպրոտեինային կոմպլեքսի ակտիվացումը: Ակզրում համարում էին, որ ԱԵՐԿՖ-ի ընկալիչների պաշարումը բերում է ֆիբրինօգենի կապնամ ընկճնամը GPⅡb-IIIa ընկալիչների հետ, սակայն այժմ գոնում են, որ թիենոպահիդիմները(1) խախտում են GPⅡb-IIIa ընկալիչների կապումը Վիերանդի գործոնի հետ; 2) նվազեցնում են ֆիբրինօգենի մակարդակը; 3) նվազեցնում են արյան մածուցիկությունը:

ՖԱՐՄԱԿՈՒՆԵՏԻԿԱ. Թիենոպահիդիմների ընդունման դադարից հետո դեղերի հակագրեգանու ազդեցությունը պահպանվում է 5 օրվա ընթացքում:

ԿԻՐԱՌՈՒՄ. Տիկլոպահիդի կիրառումը սահմանափակվում է գլխավորական սուր ցերերալ իշեմիայի բուժմանը, մինչդեռ ավելի լավ տաճուղու կլոպահոգրելը նշանակում են արերուկլերուտիկ անոթային հիվանդներին:

ԿՈՂՄԱԿԻ ԼՅԵԿՏԻՆԵՐԸ. 1) լուծ; 2) ալերգիկ ռեակցիամեր՝ իմմնականում մաշկային ցան; 3) նեյտրոպենիա՝ զարգանում է բուժման առաջին 3 ամիսների ընթացքում: Այս կողմնակի էֆեկտը դարձելի է և վերանում է դեղի ընդունման դադարից հետո; 4) բրոմբոցիտոպենիա (ticlopidine): որոշ դեպքերում կյանքին վտանգ ներկայացնող բրոմբոցիտոպենիկ պուլպուրայի զարգացում, որի ժամանակ բնորոշ են բրոմբոտիկ բրոմբոցիտոպենիան, հեմոլիտիկ սակավարյունությունը (լակտատ դեհիդրօգենազ ֆերմենտի ակտիվության բարձրացում, բիլիռուբինի և ռետիկուլոցիտների քանակության բարձրացում, հապտոգլոբինի և հենօնովորինի մակարդակի նվազում), ֆրագմենտար էրիթրոցիտներ արյան քսուներուում; 5) արյունահոսություն՝ քրային, հեմատուրիա կամ ստամոքս-աղիքային; 6) ներուղիական խանգարումներ (գլխացավ, գիտակցության մրագնում, պարեզ, աֆազիա);

1.1.3.2 ԹՐՈՍԲԻՆԻ ԸՆԿԱԼԻՉՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՂՆԵՐ

ՊԵՊՏԻԿԱՅԻՆ ԴԱՍԱՍՍՆԵՐ

Թրոմբինը հանդիսանում է չափազանց ուժեղ ագրեգանող նյութ, որը ավարտին է հասցնում ներթիթերկային գործոնների “ծերբազատման ռեակցիան”, բրոմբոցիտար խցանի կոնսոլիդացիան և ծևավորումը ֆիբրինի օգնությամբ: Ագրեգացիան նա խցանում է արյան մակարդաման համար անհրաժեշտ շատ ավելի ցածր դեղաչափերով: Թրոմբոցիտար խցանի ծևավորումը առաջ է ընկնում մակարդումից, սակայն ֆիբրինի առանձին թելիկներ հայտնաբերվում են այդ խցանում ագրեգացիայի վաղ շրջանում:

Փխսազելով թաղանթային գլիկոպրոտեին V-ի հետ, թրոմբինը բրոմբոցիտների վրա ծևավորում է ընկալիչներ՝ ակտիվացված X և V պլազմային գործոնների համար: Անրացվելով թրոմբոցիտի վրա, Խա գործոնը դարձում է պաշտպանված հակարումբին III-ի և հեպարինի հականակարդիչ ազդեցությունից, ինչը անորի բրոմբացման գոտում տեղային արյան մակարդաման իրականացման համար շատ մեծ նշանակություն ունի:

Ագրեգացիայի խցանիչների և նրանց մի շառը պլազմային կոֆակտորների փոխազդեցությունը թրոմբոցիտների հետ տեղի է ունենում այդ բջիջների թաղանթների վրա՝ նախորդ կամ խցանման գործընթացում “բացվող” ընկալիչների վրա: Այդ ընկալիչները հիմնականում պատկանում են գլիկոպրոտեիններին (ԳՊ): Թրոմբոցիտների պարուղիայի շատ ծևեր (Գլանցմանի թրոմբասթենիա, Բերնար-Սուլենի մակրոցիտար թրոմբոցիտոփանթիան, Սեյ-Խենզիլի համախտանիշ) պայմանավորված են թաղանթային ԳՊ-ընկալիչների բացակայությամբ կամ նրանց այլածնամբ: Այս գործընթացները կարող են խախտվել պեպտիդային համանմաններով:

1.1.3.3 ՍԵՐՈՏՈՆԻՆԻ ԸՆԿԱԼԻՉՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՂՆԵՐ

ԿԵՏԱՆՍԵՐԻՆԵՐ

Սերոտոնինը կենսաբանական ակտիվ նյութ է՝ կենսածին ամիսների շարքից: Պարունակվում է ստամոքս աղիքային ուղում, ԿՆ-ում, ինչպես նաև թրոմբոցիտներում: Սերոտոնինը օժտված է կենսաբանական ակտիվության լայն ոլորտով, մասնավորապես, **խրանում** է թրոմբոցիտների ագրեգացիան՝ փոխազդելով սպեցիֆիկ սերոտոնինային (S₂) ընկալիչների հետ: Սակայն սերոտոնինի ներհակորդները (կետանսերին, նաֆրոնիլ, սարպոգրեգատ) դրսնորեցին ցածր արդյունավետություն սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների բուժման ժամանակ: Բացի այդ, կետանսերինով բուժման ժամանակ կարող են առաջանալ լուրջ կողմնակի երևույթներ՝ ներառյալ կյանքին սպառնացող փորոքային հաճախարտությունները: Սերոտոնինի այլ ներհակորդներ (նաֆրոնիլ, սարպոգրեգատ, սուլոկտիդիլ) կիրառվել են ընդմիջվող կաղության և երակային թրոմբոզի բուժման ժամանակ:

1.1.4 ԱԳՐԵԳԱՑԻՎՅԻ ԸՆԿԵՐՈՂՆԵՐ

ՖԻԲՐԻՆՈԳԵՆԻ GPIIb-IIIa ԸՆԿԱԼԻՉՆԵՐԻ ՆԵՐԴԱԿՈՐՈՂՆԵՐ ԱԲՏԻՔՍԻՍԱԲ, ԷՊՏԻՖԻԲՐԱՏԻԴ, ԱԳՐԱՍԱՍ

Ֆիբրինոգենի կապումը գիլկոպրոտեիդային GPIIb-IIIa ընկալիչների հետ հնարավոր է դարձնում ոչ միայն թրոմբոցիտների կապումը մեկը մյուսին, այլ նաև թրոմբոցիտի նորմալ գործունեության համար շատ անհրաժեշտ ազդանշանի փոխանցումը թրոմբոցիտի ներս (այսպես կոչված դրսից կառավարում): Կարգավորող ազդանշանների փոխանցման մեջ շատ մեծ դեր են խաղում թրոմբոցիտների GPIIb-IIIa ընկալիչները, որոնք պայմանավորում են:

1) Ֆիբրինոգենի կապումը; 2) կալցիումի իոնների հոսքի փոփոխությունը; 3) թրոմբոքսան A2-ի առաջացումը; 4) թրոմբոցիտների ակտիվացման մարկերների էքսպրեսիայի բարձրացումը: Փորձարկումները in vitro պայմաններում ցույց տվեցին, որ թրոմբոցիտների GPIIb-IIIa ընկալիչների 50% պաշարումը **աբցիքսիմաքրով** զգալիորեն նվազեցնում է թրոմբոցիտների ագրեգացիան: Աբցիքսիմաքի կապումը թրոմբոցիտների GPIIb-IIIa ընկալիչների հետ անդարձելի բնույթ է կրում, իսկ կիսա-տրոհման ժամանակը 18-24 ժամ է կազմում: Կլինիկական փորձարկումները ցույց տվեցին, որ աբցիքսիմաքի ավելացումը ընդունված հակաբրոնքություն թերապիային նվազեցնում է ինչպես երկարատև, այնպես էլ կարճատև իշեմիկ գրոհները բարձր վտանգ ներկայացնող պսակային անգիտվաստիկ վիրաբուժական միջամտությանն ենթարկված հիվանդների մոտ:

GPIIb-IIIa ընկալիչների ներհակորդ էպտիֆիբատիդը (eptifibatide) թրոմբոցիտների ագրեգացիայի շատ արդյունավետ ընկճող է: Էպտիֆիբատիդը սինթետիկ ցիկլիկ պեպտիդ է, որը կազմված է երկսուլֆիտային կամրջակով կապված 7 ամինաթթվային մնացորդներից (հեպտապեպտիդ): Ցիկլիկ պեպտիդը պարունակում է բարբուրին դեզինտեգրինի մոլեկուլում GPIIb-IIIa ընկալիչի կապող հատվածին նմանվող ազդանշանային RGD ամինաթթվային հաջորդականությունը: Էպտիֆիբատիդը կապվում է RGD ամինաթթվային հաջորդականության կապման յուրահատուկ հատվածի հետ և, ի տարբերություն աբցիքսիմաքի, չի ազդում այլ ինտեգրինների ակտիվության վրա: Բացի այդ, փոխազդելով GPIIb-IIIa ընկալիչի հետ, էպտիֆիբատիդը պաշարում է ոչ միայն ֆիբրինոգենի, այլ նաև ֆոն Վիլեբրանդի գործոնի կապումը: Այսպիսով, դեղը բարձր խնամակցությամբ ներհակորդում է GPIIb-IIIa ընկալիչների հետ: Շնորհիվ ոչ բարձր մոլեկուլար քաշի, դեղը չունի իմունոգեն հատկություն: Կլինիկական փորձարկումներում չի արձանագրվել և ոչ մի դեպք էպտիֆիբատիդի հանդեպ յուրահատուկ հակամարմինների առաջացնան: Նա կիրառվում է պսակային անորների անգիտվաստիկ վիրաբուժության ենթարկված հիվանդների իշեմիկ գրոհների հաճախականությունը նվազեցնելու համար, ինչպես նաև անկայուն կրծքի հեղձուկի բուժման նպատակով:

Ագրաստատը (agrestat) իր կառուցվածքով թիրոզին հիշեցնող փոքրիկ ոչ պեպտիդային մոլեկուլ է: Դեղը օժտված է բարձր խնամակցությամբ և ընտրողականությամբ GPIIb-IIIa ընկալիչների հանդեպ: Դեղը չի փոխազդում այլ ինտեգրինների հետ: Ի տարբերություն GPIIb-IIIa ընկալիչների ֆիբրինոգեն-կապող հատվածի հետ փոխազդող էպտիֆիբատիդի ոչ պեպտիդային միմետիկները՝ ագրաստատը, լամիֆիբանը և թիրոֆիբանը նմանակում են RGD ամինաթթվային հաջորդականության երկրաչափական և ստերեոտաքսիկ հատկություններին, ինչպես նաև լիցքի տեղաբաշխումը RGD ազդանշանային հաջորդականության մակերեսի վրա: Ագրաստատը զբաղեցնում է ամբողջ RGD-կապող մակերեսը GPIIb-IIIa գլիկոպեպտիդի մոլեկուլում և լրիվ պաշարում է ֆիբրինոգենի կապումը Վիլեբրանդի գործոնի հետ:

1.1.5 ՎԻԼԵԲՐԱՆԴԻ ԳՈՐԾՈՆԻ ԸՆԿԵՐՈՂՆԵՐ (ՎԳԸ)

Վիլեբրանդի գործոնի U, դոմենի հետ կապող վերախմբավորված պեպտիդներ

Վիլեբրանդի գործոնը (ՎԳԸ) կարևոր դեր ունի թրոմբոցիտների աճակցման գործում, միաժամանակ փոխազդելով մերանոթենային մատրիքսի բաղադրիչների և թրոմբոցիտների GPIb-IX ընկալիչների հետ: Այդ կոմպլեքսը (մերանոթենու մատրիքսի բաղադրիչներ: GPIb-IX ընկալիչներ) խրանում է GPIIb-IIIa գլիկոպրոտեինը, ինչը զուգորդվում է ֆիբրինոգենի պոլիմերիզացիայով և թրոմբոցիտների

ագրեգացիայով: Ներհակորդները կամխում են Վիլերամդի գործոնի (ՎԳ) կապումը *GPIb-IX* ընկալիչների հետ և ընկում են ոչ միայն թրոմբոցիտների ագրեգացիան, այլ նաև թրոմբի ծևավորումը (կամխելով *GPIb-IIIa* ակտիվացումը):

Ներկայումս սինթեզվել են ՎԳ-ի տարբեր դասի բազմաթիվ ներհակորդներ, ներառյալ մոնոկլոնալ հակամարմիններ, ռեկոմբինանտային պեպտիդներ, առլինեռկարբոքսիլաթրո (ԱԵԹ): Վերջինս իրենից ներկայացնում է պոլիանիտային, պոլիկարբոքսիլացված պոլիմեր, որն ընկում է ՎԳ-ով միջնորդված թրոմբոցիտների ագրեգացիան: ԱԵԹ-ի հետ կապումը բերում է ՎԳ մուլտիմերների երրորդային և չորրորդային կառուցվածքի փոփոխությունների և կամխում է ՎԳ-ի փոխազդեցությունը *GPIb-IX* ընկալիչների հետ:

Բարձր հակամարդկանատային ակտիվությամբ են օժտված նաև ՎԳ-ի **A1** դոմենի հետ կապված ռեկոմբինանտային պեպտիդները, ինչպես նաև ՎԳ-ի դեմ ուղղված մոնոկլոնալ հակամարմինները: Սակայն այս բոլոր դեղերը անցնում են կլինիկական փորձարկման փուլը:

ՀԱԿԱՎՈՐԵԳԱՆՏՏԵՐԻ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Թրոմբոցիտոպենիաների և թրոմբոցիտոպարիաների (Վերլգոֆի հիվանդություն, ցիտոստատիկների ազդեցություն և այլն) ֆոնի վրա նկատվող արյունահոսություններ:

ՀԱԿԱՎՈՐԵԳԱՆՏՏԵՐ

1.2.1 ՈՒՂՂԱԿԻ ԱԶԴՈՂ. ՀԵՊԱՐԻՆՆԵՐ

Հեպարինները իրենցից ներկայացնում են շարքային ամիոնային պոլիէլեկտրոլիտների խումբ, որոնց ներկայացնուցիչները տարբերվութ են մեկը մյուսից ծծումքաթթվի մասցորդների որակով և քանակով: Ամիոնային խմբերը մոլեկուլարիմ տալիս են բացասական լիցք: Դեղապատրաստուկները սուամում են խոշոր եղջրավոր ամասումների (**հեպարինի ճատրիումական աղ**) և խոգերի (**հեպարինի կալցիումական աղ** կամ **կալցիպարին**) բոքերից և լարոդից: Իրենցից ներկայացնում են բարձրամոլեկուլյար կամ ոչ ֆրակցիոն հեպարին (10-16 կԴ և ավել միջին մոլեկուլյար քաշով): Բժշկության մեջ կիրառում են նաև հեպարինի ցածրամոլեկուլյար կամ ֆուկոցին դեղապատրաստուկները (2.5-8 կԴ մոլեկուլյար քաշով): **Լոգիպարին, ֆրաքսիպարին, դալտեպարին, կլիվարին**, որոնք ստանում են բարձրամոլեկուլյար հեպարինի ֆերմենտատիվ դեպուլիմերիզացիայի եղանակով բակտերիալ հեպարինազայի օգնությամբ: Նրանք պատկանում են հեպարինների II սերնդին, որոնք տարբերվում են I սերնդի հեպարիններից հետևյալ հատկություններով: 1) օժտված են թույլ հակամակարդիչ ակտիվությամբ (չեն կապում II գործոնը), այսինքն նրանք չեն երկարացնում արյան մակարդման ժամանակը, բայց նրանց թերապևտիկ ազդեցությունը ավելի մեծ է: Դա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ չի կարելի անտեսել հեպարինի հակամարեգանս ակտիվությունը; 2) ունեն բարձր կենսամատչելիություն (Ե/Ը, մ/մ) (մոտենում է 100%); հեպարինը I սերնդի կենսամատչելիությունը հավասար է 30%; 3) ունեն պլազմայի սպիտակուցների հետ կապման ցածր աստիճան: Ինհայպացին ծանապարիով ներմուծնան ժամանակ հեպարինը զավթվում է ալվեոլյար մակրոֆագերով, որտեղ ստեղծվում են պաշարներ դեղապատրաստուկի երկար մուտքը արյան մեջ ապահովելու համար: Կարելի է նշանակել շաբաթը 2-3 անգամ; 4) ինտենսիվ զավթվում են էնդոթելիալ և ռենիկուլ-էնդոթելիալ համակարգի թղթշներով, կուտակվելով լարդում և փայծածում: Ինչքան շատ է հեպարինի կուտակումը այդ թղթշներում, այդքան նրա հակարումքոցիտար էֆեկտը ավելի արտահայտված և երկարատև է: Ենթամաշկային ներմուծման ժամանակ կարելի է նշանակել 1-2 անգամ (I սերնդի հեպարինները նշանակում են 4-6 անգամ); 5) ունեն ազդեցության երկար տևողություն; 6) հազվադեպ են առաջացնում արյունահոսություններ; 8) չեն առաջացնում II տիպի թրոմբոցիտների կամխային պատճենի դեմ չեն առաջանում հակամարմիններ:

ՖԱՐՄԱԿՈԴԻՆԱՄԻԿԱ. Հեպարինը գործում է *in vivo* և *in vitro* պայմաններում և օժտված է հակամակարդիչ, ֆիբրինոլիտիկ և հակամարեգանտ ազդեցությամբ:

1. **Հակամակարդիչ ազդեցություն.** Հեպարինի ազդեցության մեխանիզմը կախված է պլազմային պրոթեազի յուրահատուկ ընկանողի՝ հակարումբին III-ի առկայությունից: Իրականում հակարումբին III անվանումը սխալ է, քանի որ բացի թրոմբինի ակտիվացերծումից նաև ակտիվացերծում է նաև այլ սերինային պրոթեազներ, ներառյալ IXa, Xa, XIa և XIIa: Հակարումբին III-ը կարելի է համարել այդ պրոթեազների համար նախատեսված ստոյքիտոնետրիկ “ինքնասպան թակարդ”: Երբ այդ պրոթեազներից մեկը հանդիպում է հակարումբին III-ին, պրոթեազը հարձակվում է հակարումբինի ռեակտիվ հատվածում տեղակայված յուրահատուկ արգինին-սերինային (Arg-Ser) պեպտիդային կապի վրա և ընկնում է “թակարդի” մեջ ի շնորհիվ պրոթեազի սերինային մնացորդի և արգինինային մնացորդի միջև հակարումբին III-ի ակտիվ հատվածում կուվալենտ էսթերային կապի հաստատման: Այս ամենը բերում է պրոթեազի և հակարումբինի մոլեկուլներից բաղկացած 1:1 հարաբերությամբ կայուն կոնալեքսի առաջացնանը, ինչը

կանխում է պրոբեազի հետագա մասնակցությունը մակարդման կասկադային ռեակցիաներում:

Յեպարինի բացակայության պայմաններում կապի հաստատման ռեակցիան պրոբեազի և հակաթրոնքին III-ի միջև ընթանում է շատ դանդաղ: Յեպարինը, ազդելով որպես կոֆակտոր, արագացնում է այդ ռեակցիան 1000 անգամ: Յեպարինը օժտված է 2 կարևոր ֆիզիոլոգիական ֆունկցիաներով. 1) պրոբեազ **ԵԵՐԻ** և հակաթրոնքին միջև հաստատվող կատալիտիկ մակերեսի դեր; 2) հեպարինը հակաթրոնքին III-ի մոլեկուլում մակածում է կոմֆորմացիոն փոփոխություններ, ինչը այդ մոլեկուլի ռեակտիվ հատվածը դարձնում է ավելի հասանելի հարձակվող պրոբեազի համար: Այդ ռեակցիայի առաջին փուլը ներառում է բացասական լիցքավորված հեպարինի կապումը հակաթրոնքին III մոլեկուլի լիզինով հարուստ շրջանի հետ (դրական լիցքի շրջան): Այսպիսով, հեպարինի և հակաթրոնքին III-ի փոխազդեցությունը մասնակիորեն էլեկտրոստատիկ բնույթ է կրում: Այդ պրոբեազի և հակաթրոնքին III-ի միջև ընթացող կոմպլեքսավորման ռեակցիայի ընթացքում հեպարինը անջատվում է հակաթրոնքին III-ից և, այդ իսկ պատճառով, ունակ է կատալիզել հավելյալ պրոբեազ-հակաթրոնքին III փոխազդեցության ռեակցիան: Այսպիսով, հեպարինը այդ կոմպլեքսավորման ռեակցիայում չի ծախսվում:

Յետաքրքիր է, որ տարբեր մոլեկուլար քաշով հեպարինները օժտված են տարբեր հակամակարդիչ ակտիվությամբ: Այդ տարբեր ակտիվությունը պայմանավորված է հեպարինի կապման համար տարբեր պահանջարկներով, ինչը դրսևորվում է հակաթրոնքին III-ով իրականացված թրոնքինի և Խա գործոնի ակտիվազերծնամբ: Յակաթրոնքին III-ով թրոնքինի ակտիվազերծումը առավել արդյունավետ կատալիզելու համար հեպարինի մեկ մոլեկուլը պետք է միաժամանակ կապվի ինչպես թրոնքինի, այնպես էլ հակաթրոնքինի հետ: Յեպարինով մակածված հակաթրոնքին III մոլեկուլի կոմֆորմացիոն փոփոխություններից բացի այս “կաղապարային” ֆունկցիան անհրաժեշտ է նրա համար, որպեսզի հակաթրոնքին III մոլեկուլը դառնա ավելի մատչելի կամ զգայուն թրոնքինի հետ կոմպլեքսավորման համար: Ընդհակառակը, հակաթրոնքին III-ով Խա գործոնի ակտիվազերծումը կատալիզելու համար հեպարինը պետք է կապվի միայն հակաթրոնքինի հետ: Յեպարինի հետ կապի հաստատումով մակածված հակաթրոնքին III-ի կոմֆորմացիոն փոփոխությունները ինքնըստինքյան բավարար են, որպեսզի հակաթրոնքինը դառնա ավելի զգայուն Խա գործոնի հետ կոմպլեքսավորվելու համար: Այսպիսով, ցածրամոլեկուլար հեպարինները, որոնց մոլեկուլար քաշը տատանվում է 3-4 kDa և որոնք բաղկացած են 18-ից քիչ մոնոսախարիդային միավորներից, ունակ են արդյունավետորեն կատալիզել Խա գործոնի ակտիվազերծումը հակաթրոնքին III-ով, սակայն սակավ արդյունավետ են հակաթրոնքին III-ով թրոնքինի ակտիվազերծումը կատալիզելու ժամանակ: Դրան հակառակ, ոչ ֆրակցիոն հեպարինը, որի մոլեկուլար քաշը տատար Յուլիմ է 20 kDa սահմաններում և օժտված է բավարար երկարությամբ թրոնքինը և հակաթրոնքինը միաժամանակ կապելու համար, քանի որ բաղկացած է 18-ից ավել մոնոսախարիդային միավորներից, և, այդ իսկ պատճառով, ունակ է արդյունավետորեն կատալիզելու ինչպես թրոնքինի, այնպես էլ Խա գործոնի ակտիվազերծումը հակաթրոնքին III-ով: Քանակապես, ցածրամոլեկուլար հեպարինի հակա-Խա / հակա-թրոնքին (IIa) ակտիվության հարաբերությունը 3 անգամ ավելի մեծ է, քան ոչ ֆրակցիոն հեպարինի: Ինչպես ցածրամոլեկուլար, այնպես էլ բարձրամոլեկուլար հեպարինները օգտագործում են խիստ բացասական լիցքավորում ունեցող պենտասախարիդային կառուցվածքը հակաթրոնքին III-ը կապելու, ինչպես նաև կոմպլեքսավորման ռեակցիայի համար անհրաժեշտ հակաթրոնքին III-ի կոմֆորմացիոն փոփոխությունները մակածելու համար: Այդ պենտասախարիդը այժմ ուսումնասիրում են որպես Խա գործոնի առավել ընտրողական ակտիվազերծող:

Այսպիսով, հեպարինի հակամակարդիչ ակտիվությունը կախված է արյան մեջ շրջանառող հակաթրոնքին III-ի մակարդակից: Այդ իսկ պատճառով հեպարինի այդ կոֆակտորի պակասը անհրաժեշտ է կոմպենսացնել թարմ արյան կամ թարմ սառեցված արյան փոխներարկման միջոցով, իսկ ավելի հազվադեպ՝ ալբումինի ներմուծումով:

2. **Ֆիբրինոլիտիկ էֆեկտի** հիմքում ընկած է հակալազմինի հետ կոմպլեքս միացության առաջացումը և դրանով պայմանավորված ֆիբրինոլիտիկ համակարգի ակտիվության բարձրացումը:

3. Հակասագրեցանտային էֆեկտի հիմքում ընկած է հեպարինի կուտակումը և նորոթելիալ և արյան բջիջների մակերեսին, ստեղծելով նրանց թաղանթներում 100 անգամ ավել խտություն, քան արյան պլազմայում: Դրանով հեպարինը ստեղծում է բացասական լիցք և նորոթելիալ և թրոմբոցիտար բջիջների մակերեսին, որը և աղիեզիայի և ագրեգացիայի կանխման պատճառն է հանդիսանում:

Հեպարինը ունի մի շարք այլ էֆեկտներ, որոնք կապ չունեն նրա հիմնական ազդեցության հետ. 1) T- և B-լիմֆոցիտների կոռպերացիայի խախտում և, հետևաբար, հմունովլորուլինների առաջացման խանգարում; 2) կոմպլեմենտի համակարգի ընկճում; 3) ալդոստերոնի չափը գերազանցող սինթեզի ընկճում; 4) հիստամինի կապում և հիստամինազայի ակտիվացում; 5) լիպոպրոտեինլիպազայի խթանում:

ԿԻՐԱՌՈՒՄ. 1) ԴՆՍ-համախտանիշ; 2) Թրոմբոզների և էնքուլիաների պրոֆիլակտիկա սրտի կափյուրների պրոտեզներ ունեցող հիվանդների մոտ, կրծքի հեղձուկով, սրտի ինֆարկտով, շողացող առիթմիայով տառապող հիվանդների մոտ; 3) էքստրակորպորալ հեմոռիհալիզ և հեմասորբցիա անցկացնելիս; 4) Թարախային մենինգիտ: Այս պաթոլոգիայի ժամանակ ողնուղեղային հեղուկում նվազում է հեպարինի քանակությունը և շատանում է սպիտակուցների (այդ թվում նաև ֆիբրինօգենի), սերոտոնինի, տարբեր ֆերմենտների քանակությունը, որոնք առաջացնում են ուղեղի թաղանթների նեկրոտիկ փոփոխություններ և ուղեղի անոթներում թրոմբեր: Հեպարինի էնդուզումբալ ներմուծումը բերում է վերոնշված ֆերմենտների կապան և ակտիվացերծման, կտրուկ նվազեցնելով մահացությունը և նյարդային բարդությունները; 5) հեպարինը օգտագործում են ռևմատիզմի, հիանալիուստերոնիզմի, բրոնխիալ ասթմայի բուժման ժամանակ:

ԿՈՂՄԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. 1) արյունահոսությունները, որոնք գերզոգավորնան կամ էլ հեպարինի հանդեպ գերզայունության հետևանք կարող են լինել: Այս դեպքում ներմուծում են հեպարինի ներհակորդը՝ հիմնային սպիտակուց **պրոտամինի տուֆատ** կամ **քլորիդ**, որը ներմուծում են 0/6 դանդաղ (5000 պրոտամինային միավոր 10 րոպեի ընթացքում): Այդ սպիտակուցի ներմուծումը կարող է առաջացնել ոչ սպեցիֆիկ ալերգիկ ռեակցիաներ (ունքի կարմրություն; եղջրացան; ցավեր երակներում, կրծքի շրջանում, փորացավեր; դող և այլն): Բայց ամենավտանգավոր էֆեկտն է հանդիսանում թրոմբոքսան A₂-ի ձերբագատումը հեպարին-պրոտամին կոմպլեքսով: Թրոմբոքսան A₂-ի ձերբագատումը նկատվում է պրոտամինի ներմուծման առաջին իսկ րոպեներից, առաջացնելով զարկերակային ճնշման բարձրացում թրքերի անոթներում, աջփորքային անբավարարություն և համակարգային հիպոտենզիա: Որպես հեպարինի ներհակորդներ կիրառում են նաև սինթետիկ դեղապատրաստուկներ՝ **տոլուիդինային կապույտը** կամ **ուրիկվինը**, բայց առաջնորդ քիչ արդյունավետ է, իսկ մյուսը՝ տոքսիկ է (երիկամների խողովակների վնասում, զարկերակային հիպոտոնիա); 2) հեպարինից առաջացած թրոմբոցիտոպենիաների 2 տեսակ են տարբերում. ա) անցողիկ միջին ծանրության թրոմբոցիտոպենիա, որը ի հայտ է գալիս բուժման 2-4 օրը և կարող է անհետանալ նույնիսկ հեպարինի ներմուծման շարունակման դեպքում: Պատճառը պարզ չէ; բ) բուժման 6-12 օրը կարող է զարգանալ և տիպի թրոմբոցիտոպենիան, որը կյանքի համար շատ վտանգավոր է: Նրա պատճառն է հանդիսանում հակամարմինների (իմունոգլոբուլիններ G և M) առաջացումը, որոնք առաջացնում են թրոմբոցիտների ագրեգացիա, որի ժամանակ թրոմբոցիտներից ձերբագատվում են ագրեգացնող գործոններ (ԱթրՖ, թրոմբոքսան A₂, սերոտոնին և այլն): Առաջանում է հեպարինինդուկցվող թրոմբոզ (սպիտակ մակարուկի համախտանիշ), որը կարող է պասկային, երիկամային, թքային և այլ զարկերակային էնքուլիաների պատճառ հանդիսանալ շատ ծանր հետևանքներով: և տիպի թրոմբոցիտոպենիայի բացահայտումից 1-2 օր առաջ հիվանդի մոտ մանր անոթների թրոմբոզի հետ կապված իշեմիայի պատճառը զարգանում են փորացավեր և ցավեր մեջքի ներքին նասում: Հեպարինով բուժման 5-6 օրվանից անհրաժեշտ է հսկողության տակ պահել թրոմբոցիտների քանակը, ինչպես նաև արյան մակարդման արագությունը, որը չափությունը է գերազանցի նորմալ ցուցանիշները 2-3 անգամ; 3) դիսպեպսիկ երևույթներ՝ սրտխառնոց, փսխում, ախորժակի անկում, լուծ; 4) ալերգիկ ռեակցիաներ (եղջրացան, մաշկային քոր, միալգիա, արթրալգիա); 5) օստեոպորոզ և փափուկ հյուսվածքների կալցիֆիկացում: Օստեոպորոզի կլինիկական դրսերումները կարող են ի հայտ գալ հեպարինով երկարատև բուժման ժամանակ (6

ամիս և ավել) և արտահայտվել քաշի նվազումով, ցավերով մեջքի շրջանում և գոտկատեղում, հակումով դեպի կոտրվածքները: Այդ էֆեկտը հեպարինի ճարպաթուների Ca^{2+} -ի հետ կապման արդյունք է, իսկ ճարպաթուները առաջանում են լիպոպրոտեին լիպազայի ազդեցության տակ և պարագանի ակտիվացման հետևանքով; 6) տեղային (հազվադեպ՝ համակարգային) ալոպեցիա (մազաթափում) և/կամ մազերի սպիտակում; 7) Ոեթրոնբրոզներ, որոնք կարող են զարգանալ դեղի սխալ (շատ արագ կամ վաղաժամ) հանման պատճառով: Նպատակահարմար է հեպարինը համել անուղղակի հակամակարդիչներ ֆոնի վրա:

1.2.2 ԱՆՈՒԴՐԱԿԻ ԱԶԳՈՂ ՀԱԿԱՍՎԱԿԱՐՈՂԻՉՆԵՐ

ՎԻՏԱՄԻՆ Կ-ի ՆԵՐՋԱԿՈՐԻՇՆԵՐ, ՆԵՐՈՒԿՈՒՄԱՐԻՆ, ՍԻՆԿՈՒՄԱՐ, ՎԱՐՖԱՐԻՆ

ՖԱՐՍԱԿՈՐԻՆԱՄԻԿԱ. Այս խմբի ներկայացուցիչները իրենց էֆեկտները դրսևորում են միայն *in vivo* պայմաններում: Նրանք ընկճում են վիտամին Կ-ի էպօքսիդային ձևը խինոնային ձևի վերածող էպօքսիդերուկտազան, դրանով իսկ խախտելով վիտամինի ցիկլային ձևափոխումները և ընկճելով նրա ակտիվությունը (նույնատիպ էֆեկտ առաջացնում է ասպիրինը): Արդյունքում խախտվում է II, VII, IX և X գործոնի ակտիվացումը, ինչը անհրաժեշտ է ֆիբրինային թրոմբի առաջացման համար: Բայց միաժամանակ անուղղակի հակամակարդիչները կանխում են հակամակարդիչ ակտիվությամբ օժտված սպիտակուցներ *C* և *S*-ի ակտիվացումը:

Երկարատև օգտագործման ժամանակ կարող են առաջացնել անոթների էլաստիկությունը պահպանող գործոնի ընկճում, ինչը կբարձրացնի անոթների թափանցելիությունը և դյուրաբեկությունը և արյունահոսությունների պատճառ կիանդիսանա:

ԿԻՐԱՌՈՒՄ. 1) Թրոմբոզների, թրոմբոֆլեբիտների, ինֆարկտի ժամանակ թրոմբունքուիկ բարդությունների, էնքոլիկ (բայց ոչ հեմոռօքիկ) ինսուլտների, տարբեր օրգանների էնքոլիաների պրոֆիլակտիկա և բուժում; 2) Յետվիրահատական շրջանում օգտագործում են թրոմբագոյացումը կանխելու համար:

ԿՈՂՄՍԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. 1) արյունահոսություններ; 2) փափուկ հյուսվածքներում “կումարինային” նեկրոզների առաջացում (հետույք, կրծքագեղձեր, այտեր, առնանդամ), ինչը մազանոթների և վենուլների թրոմբոզի հետևանք է: Դրա պատճառն է *C* և *S* սպիտակուցների քանակության ավելի վաղ նվազումը, քան *II*, *VII*, *IX*, *X* գործոնների: Այդ բարդության վերացման համար ներարկում են *C* և *S* սպիտակուցներով հարուստ թարմ սառեցված արյան պլազմա³ Ոեթրոմբոզներ, որոնք առաջանում են դեղի հանկարծակի հանումից; 4) Դիսպեպտիկ երևույթներ՝ սրտխառնոց, փսխում, լուծ, փորացավ և այլն; 5) Ալերգիկ ռեակցիաներ (եղջրացան, երիթեմատոզ, մակուլյար կամ պապուլյոզ մաշկային ցան և նույնիսկ երսինիատիկ դերմատիտ); 6) Երիկամների (երիկամների խողովակների դեգեներատիվ փոփոխություններ, ալբումինուրիա, զանգվածային այտուցներ) և յարոի (տրանսամինազների, հիմնային ֆուսֆատազայի ակտիվության կամ բիլիռուբինի մակարդակի բարձրացում) տոքսիկ ախտահարումներ; 7) Տարածուն ալոպեցիա:

1.2.3 ՔԻՐՈԴԻՆ և ԹՐՈՄԲԻՆ ԱՅԼ ՈՒԴՐԱԿԻ ԸՆԿԲՈՂՆԵՐ

Թրոմբինը շատ կարևոր դեր է խաղում հեմոստազի գործընթացում: Այս մակարդման գործոնը 1) պրոթենիտիկ ծևով ֆիբրինոգենը փոխակերպում է ֆիբրինի; 2) ակտիվացնում է *XIII* գործոնը, որը խաչած կարում է ֆիբրին-առումները, առաջացնելով կայում մակարդուկ; 3) ակտիվացնում է թրոմբոցիտները և 4) մակածում է մերանորենուց *PGI₂*, հյուսվածքային պլազմինոգենի ակտիվատոր (*t-PA*) և պլազմինոգենի ակտիվատորի 1-տիպի ընկըռող (*PAI-1*) ձերագատումը: Այսպիսով, թրոմբինի ուղղակի ընկըռողները կարող են թողնել զգալի ազդեցություն մակարդման գործընթացների վրա:

Թրոմբինի ուղղակի ընկըռող՝ **հիրուլիֆին** ռեկումինանտ 65-ամինորքվային պլյազմպտիլի է, որը ստացվում է թթվական տղրուկմերից: Տարիների ընթացքում վիրարույժները օգտագործում են թթվական տղրուկները որպեսի կանխեն թրոմբոզի առաջացումը նոր կացրած մատի նույր անոթներում: Յիրուլիֆինը (լեպիրուլիֆին) բարձր խնամակցությամբ կապում է թրոմբինի մոլեկուլի 2 հատվածների հետ. 1) ֆերմենտատիվ ակտիվ հատվածի հետ և 2) “էքսուայտի” հետ: Յիրուլիֆինը, կապելով թրոմբինի հետ, կանխում է թրոմբինով միջնորդված ֆիբրինոգենի և *XIII* գործոնի ակտիվացումը: Յիրուլիֆինը շատ արդյունավետ հակամակարդիչ է, քանի որ զարգացող մակարդուկներում կարող է ընկել ինչպես ազատ, այնպես էլ ֆիբրինի հետ կապված թրոմբինը:

Ազդեցության մեխանիզմից ելնելով, կարելի է ենթադրել, որ արյունահոսությունը հիրուլիֆին գլխավոր կողմնակի էֆեկտներից է: Այսօր, *FDA* հաստատել է հիրուլիֆինի կիրարումը միայն այն

հիվանդների մոտ, որոնք չեն կարող տանել հեպարինը (օրինակ, այն հիվանդների, որոնց մոտ հեպարինը առաջացնում է բրոնքիտոպենիա): Արգատրորանը (*argatroban*) և հիրուլինի սինթետիկ համամժան բիվալիրուդինը (*bivalirudin*) մեկ այլ թրոմբինի ուղղակի ընկճողներից են, որոնք թույլատրվել են կիրառման:

1.2.4 ՈԵԿՈՍՐԻՆԱՎՏԱՅԻՆ ԱԿՏԻՎԱՑԱԾ ԸՄԻՏԱԿՈՒԹ (r-APC)

Ընդերածին մեխանիզմով ակտիվացած C սպիտակուցք դրսևորում է հակամակարդիչ ազդեցություն, ընկճելով *Va* և *Vlla* գործոնները: Ակտիվացած C սպիտակուցք (APC) նաև նվազեցնում է արյան մեջ շրջանառող պլազմինոգենի խրամիչ 1 տիպի ընկճողի քանակությունը, դրանով իսկ ուժեղացնելով ֆիբրինոլիզը: Վերջապես, APC նվազեցնում է բորբոքման ինտենսիվությունը, ընկճելով մոնոցիտներից ուռուցքային մեռուկացնող ռ գործոնի ծերեազատումը: Քանի որ բարձրացած մակարդունակությունը և բորբոքումը հանդիսանում են սեպտիկ շոկի ցուցանիշ, APC փորձարկվել էր այդ հիվանդության ժամանակ կենտրանիների և մարդու վրա: Ուկոմքինանուային ակտիվացած C սպիտակուցք (r-APC) զգալիորեն նվազեցնում է մահացությունը այն հիվանդների մոտ, որոնք ունեն սեպտիկ շոկից մահանալու բարձր վտանգ, իսկ FDA թույլատրել է APC կիրառումը ծանր սեպսիսի բուժման համար, որի ժամանակ նկատվում է օրգանների սուր դիսֆունկցիա, շոկ, օլիգուրիա, ացիդո և հիպոթրոքսիմիա: Ինչպես և այլ հակամակարդիչները r-APC բարձրացնում է արյունահոսության վտանգը: Այդ իսկ պատճառով այդ նյութը հակացուցված է նոր վիրահատված հիվանդներին, սարդի, երիկամի քրոնիկական անբավարարությամբ տառապող հիվանդներին, ինչպես նաև թրոնքիտոպենիայով հիվանդներին:

ԴԱԿԱՍԱԿԱՐԴԻՉՆԵՐԻ ԴԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

1) հեմատուրիաներ; 2) ստամոքսի և 12-մատոնյա աղիների խոցային հիվանդություն; 3) խոցային կոլիտ; 4) միզաքարային հիվանդություններ հեմատուրիայի նախատրամադրվածությամբ; 5) հղություն; 6) անուղղակի ազդող հակամակարդիչները պետք է զգուշությամբ նշանակել սարդի ախտահարումների ժամանակ:

1.3 ՖԻԲՐԻՆՈԼԻՖԻԿԱՆԵՐ

ՊԼԱԶՄԻՆ, ՍՏՐԵՊՏՈԿԻՆԱԶԱՅ, ՈՒՐՈԿԻՆԱԶԱՅ, ԱԿՏԻԼԻԶԵ

Չնայած այն հանգամանքին, որ հեպարինը և վարֆարինը արդյունավետ են թրոմբի առաջացման և տարածման կանխարգելման գործում, այս տարբեր դասերի հակամակարդիչները սովորաբար արդյունավետ չեն արդեն կազմավորված թրոմբի դեմ: Թրոմբոլիտիկները կիրառում են արդեն ձևավորված մակարդուկների լուծման համար և, դրանով իսկ, խցանված անոթների անցանելիությունը վերականգնելու համար, կանխելով հեռակա հյուսվածքների մեռուկացումը: Թրոմբոլիտիկները ազդում են պրոթենիտիկ եղանակով ակտիվացնելով պլազմինոգենը, որը վերածվում է պլազմինի: Պլազմինը ոչ սպեցիֆիկ պրոթեազ է, որը լուծում է ֆիբրինը՝ առաջացնելով քայլայման արգասիքներ: Ցավոք սրտի, թրոմբոլիտիկ թերապիան կարող է լուծել ոչ միայն պաթոլոգիկ թրոմբը, այլ նաև ֆիզիոլոգիական առումով համապատասխան ֆիբրինային մակարդուկները, որոնք առաջանում են անոթային վնասնան ի պատասխան: Այսպիսով, թրոմբոլիտիկների կիրառումը կարող է բերել տարբեր աստիճանի ծանրության արյունահոսությունների:

Ֆիբրինոլիտիկների ազդեցության սկզբունքը կայանում է նրանում, որ նրանք կամ խթանում են ֆիբրինոլիզի ֆիզիոլոգիական համակարգը (ուրոկինազա, ստրեպտոկինազա, ստրեպտոռինոկազա, ակտիլիզե), նպաստելով սերինային պրոթեազայի **պլազմինի** առաջացնանը նրա նախորդող նյութից **պլազմինոգենից**, կամ էլ լրացնում են ֆիբրինոլիզինի պակասը (պլազմին): Այդ դեղերի ն/ե ներմուծման ժամանակ առաջանում է ընդհանուր լիտիկ ռեակցիա: Դրա հետևանքով քայլայվում են ինչպես թրոմբունքովիկ թրոմբերը (բուն թիրախները), այնպես էլ պաշտպանիչ հեմոստատիկ թրոմբերը: Ոչ ընտրողական համակարգային էֆեկտները նվազեցնելու նպատակով առաջարկել են 2 մոտեցում. 1) ֆիբրինոլիտիկի ներզարկերակային ներմուծում, օրինակ՝ պսակային օքրինոլիզեր, ինչը նվազեցնում է համակարգային էֆեկտը, տեղայնացնելով դեղի էֆեկտը; 2) նոր սերնդի ֆիբրինոլիտիկների կիրառում հյուսվածքային պլազմինոգենի խթանողների օգտագործումը առաջացնում է թրոմբի լիզիս ֆիբրինոգենի ավելի քիչ արտահայտված համակարգային քայլայումով: Ցավոք սրտի նրանց տարբերությունները առաջին սերնդի ֆիբրինոլիտիկներից (ստրեպտոկինազմեր) շատ չնշին են:

ՍՏՐԵՊՏՈԿԻՆԱԶՄ. Յ-հեմոլիտիկ ստրեպտոկոկերով արտադրված սպիտակուց է, որը հանդես է գալիս որպես այդ միկրոօրգանիզմի հյուսվածք-քայլայող համակարգի բաղադրիչ: Ստրեպտոկինազի ֆարմակոլոգիական ազդեցությունը ներառում է 2 փուլ. 1) կոմպլեքսավորում և 2) մաքրում: Կոմպլեքսավորման ռեակցիայում ստրեպտոկինազան պլազմինոգենի հետ առաջացնում է կայուն, ոչ կովալենտ կապով կապված 1:1 հարաբերությամբ կոմպլեքս: Կոմպլեքսավորման ռեակցիան առաջացնում է պլազմինոգենի կոմֆորմացիոն փոփոխություն, ինչի հետևանքով մերկանում է այդ սպիտակուցի պրոթեոլիտիկ ակտիվությամբ օժտված հատվածը: Ստրեպտոկինազի հետ կոմպլեքսավորված պլազմինոգենը իր առկա մերկացած ակտիվ հատվածով հետագայում կարող է պրոթեոլիտիկ ձևով մաքրել այլ պլազմինոգենի մոլեկուլները, բերելով պլազմինի առաջացնամբ: Փաստորեն թերմոդինամիկ առումով կայուն ստրեպտոկինազ: Պլազմինոգեն կոմպլեքսը համարվում է կատալիտիկ առումով ամենաարդյունավետ պլազմինոգենի ակտիվատորը *in vitro* պայմաններում:

Չնայած այն հանգամանքին, որ ստրեպտոկինազան դրսևորում է իր հզոր և պոտենցիալ օգտակար էֆեկտները թարմ թրոմբի վրա, նրա կիրառումը սահմանափակվում է 2 գործոններով. 1) Ստրեպտոկոկային ինֆեկցիա տարած հիվանդների մոտ, ինչպես նաև կարճ ժամանակահատվածում կրկնակի ներմուծման ժամանակ հնարավոր է տոլերանտության դրսևորում, որը բացատրվում է հակամարմինների առաջացնամբ: Վերջիններս կարող են չեզոքացնել ստրեպտոկինազան; 2) ստրեպտոկինազի թրոմբոլիտիկ ազդեցությունը ինչ-որ չափով ոչ սպեցիֆիկ է և կարող է բերել համակարգային ֆիբրինոլիզի զարգացնամնը:

ՈՒՐՈԿԻՆԱԶՄ ընդերածին պրոթեազ է, որը ստացվում է մարդու պտղի երիկամային բջիջների կուլտուրայից: Նա պլազմինոգենը անմիջականորեն վերափոխում է պլազմինի: Արյան մեջ պլազմինի պաշարողների առկայությունը դարձնում է անհնարին նրա օգտագործումը թրոմբի լիզիսի համար, իսկ ուրոկինազայի և ստրեպտոկինազանախախթանիչ կոմպլեքսի ընկճողների բացակայության դեպքում թույլ է տալիս նրանց կիրառումը այդ նպատակով: Թրոմբի ներսում այդ խթանողների ազդեցության տակ առաջացող պլազմինը պաշտպանված է արյան հակապլազմիններից, ինչը թույլ է տալիս պլազմինին քայլաբեկ թրոմբը ներսից: Այս ֆերմենտը հայտնաբերվել է նաև մարդու մեզում: Ներկայունս հետաքրքրությունը ուրոկինազի կիրառման ուսումնասիրման մեջ որպես թերապևտիկ միջոցի սահմանափակված է, քանի որ այս նյութը առաջացնում է համակարգային ֆիբրինոլիզ ֆիբրինի հանդեպ ազդեցության սպեցիֆիկության բացակայության պատճառով:

ԱՆԻՍՏՐԵՊԼԱԶՄ (անիզոնիլզացված պլազմինոգեն-ստրեպտոկինազային խթանիչ կոմպլեքս) (APSAC), որն իրենից ներկայացնում է ստրեպտոկինազի և պլազմինոգենի կոմպլեքս: Այս կոմպլեքսը ացետիլացվում է պլազմինոգենի ակտիվ հատվածում: Այս ացետիլացումը կանխում է պլազմինոգենի պրոթեոլիտիկ ակտիվության դրսևորումը: APSAC-ը նշանակում են ներերակային: Դեղը շրջանառում է արյան մեջ ակտիվագերծ կոմպլեքսի վիճակում (նախադեղ): Շրջանառող կոմպլեքսը կապվում է ֆիբրինի հետ բարձր խնամակցությամբ և սպեցիֆիկությամբ ի շնորհիվ այդ կոմպլեքսի պլազմինոգենի բաղադրիչի վրա գտնվող ֆիբրին կապող հատվածի: Դետագայում կոմպլեքսը ենթարկվում է սպոնտան, ոչ ֆերմենտատիվ հիդրոլիզի, որի ժամանակ պլազմինոգենի ակտիվ հատվածը դեացետիլացվում է 90 րոպե կիսա-կյանքի տևողությամբ: Այդ իսկ պատճառով դեացետիլացված APSAC-ը ակտիվանում է ֆիբրինային մակարդուկի հատվածում:

Այդ դեղապատրաստուկը արագ ն/ե ներմուծումների հնարավորություններ է տալիս, ունի բարձր խնամակցություն թրոմբի քայլաբան նկատմամբ (ավելի շատ ազդում է թրոմբի հետ կապված պլազմինոգենի, քան արյան մեջ շրջանառող ազատ պլազմինոգենի վրա): և օժտված է ավելի մեծ թրոմբոլիտիկ ակտիվությամբ:

ՊԼԱԶՄԻՆՈԳԵՆԻ ՀՅՈՒՍՎԱԾՔԱՅԻՆ ԽԹԱՆԻՉ (t-PA): Պլազմինոգենը կարող է խթանվել նաև ընդերածին t-PA-ով: Այդ խթանիչները ազդում են հիմնականում ֆիբրինի հետ կապված պլազմինոգենի վրա, որը (տեսականորեն) սահմանափակում է ֆիբրինոլիզը թրոմբի առաջացնաման տեղում, ինչը թույլ է տալիս խուսափել համակարգային էֆեկտներից:

Կատարյալ թումբոլիտիկը պետք է չունենա հակածինային հատկություն և պետք է առաջացնի տեղային ֆիբրինոլիզ միայն պարուղիկ թումբի օջախում: t-PA մոտավորապես հաճապատասխանում է այդ պահանջներին: t-PA սերինային պրոբեազ է, որը արտադրվում է մարդու ներանորենու թշջներով: Այսպիսով, t-PA օժտված չէ հակածինային հատկություններով: t-PA կապվում է նոր առաջացած (թարմ) թումբի հետ բարձր խնամակցությամբ, առաջացնելով ֆիբրինոլիզ թումբի առաջացման հատվածում: Մեկ անգամ կապվելով թարմ թումբի հետ t-PA ենթարկվում է կոնֆորմացիոն ձևափոխմանը, ինչը շնորհում է նրան պլազմինոգենի հզոր ակտիվատորի հատկություն: Ընդհակառակը, t-PA պլազմինոգենի շատ թույլ ակտիվատոր է, եթե t-PA չի կապվում ֆիբրինի հետ:

Ուկոնմբինանտային ԴՆԹ տեխնոլոգիան թույլ է տալիս ռեկոնմբինանտային t-PA ստեղծում: Ուկոնմբինանտային t-PA արդյունավետ է խցանված պսակային զարկերակների անցանելիությունը վերականգնելու համար, սահմանափակելով սրտի ֆունկցիայի խանգարումները և նվազեցնելով մահացությունը սրտամկանի ինֆարկտից: Սակայն ֆարմակոլոգիական դեղաչափերով ռեկոնմբինանտային t-PA կարող է բերել համակարգային լիտիկ վիճակի զարգացման և (ինչպես և այլ թումբոլիտիկների դեպքում) առաջացնել անցանկալի արյունահոսություններ, ներառյալ ուղեղային արյունազեղումներ: Այսպիսով, t-PA կիրառումը հակացուցված է ոչ վաղ անցյալում ինսուլտ տարած հիվանդներին:

ԿԻՐԱՌՈՒՄ. 1) բազմաքանակ թոքային ենթոլիա, որը միևնույն ժամանակ այդքան մեծաքանակ չէ վիրահատական միջամտության համար; 2) կենտրոնական խորանիստ երակների թումբոզ; կարելի է օգտագործել նաև ներզարկերակային ծայրանասային անոթների ախտահարումների ժամանակ; 3) սրտամկանի սուր ինֆարկտի ժամանակ:

ՖԻԲՐԻՆՈԼԻՏԻԿՆԵՐԻ ԴԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

1) հեմոռագիկ դիաբեզներ; 2) ստամոքսի և 12-մատնյա աղիների խոցային հիվանդություն; 3) արյունահոսություններ; 4) ֆիբրինոգենոպենիա 5) ուղեղային ախտահարումների ժամանակ արյան բարձր ճնշումը; 2) պալարախտի սուր շրջան:

2.1 ՊՐՈՍՎԱՐԵՎԱԼՏՆԵՐ

Ա Դ Ր Ո Չ Ս Ո Ն աղբենալիմի նյութափոխսանակային արգասիքն է, որը գրկված է սրտի և անոթների հարթ մկանների աղբենընկալիչներու խթանելու ունակություններու:

ՖԱՐՍԱԿՈՂԻՆԱՍՄԻԿԱ. Աղրոքսոնը խթանում է թումբոցիտների G-սպիտակուցի հետ կապված առնկալիչները, բերելով ֆուֆոլիպազա C-ի ակտիվացմանը, ինչը, ի շնորհիվ առաջացած ինողիտուերֆուֆատի և դիացիլիցերոլի ազդեցության, շատացնում է ներքջային Ca^{2+} -ի քանակությունը:

Թումբոցիտներում Ca^{2+} -ի շատացումը բերում է:

1) ֆուֆոլիպազա A₂-ի խթանմանը, ինչը մեծացնում է թումբոքսան A₂-ի և էնդոգերօքսիդների քանակությունը; 2) քաղանքների ֆուֆոլիպիդներից թումբոցիտներ ակտիվացնող գործոնի առաջացմանը; 3) պրոբեազների ակտիվացմանը, ինչը կրերի ակտինի կապված, ոչ ակտիվ ծկից ազատմանը (ակտինի ակտիվացում); 4) Ca^{2+} -կալմոդուլին կոնյակեթով ֆուֆոլիկնազայի ակտիվացմանը և միոզինի թեքն շղթաների ֆուֆորիկացմանը և վերջինիս ակտիվացմանը: Ակտինի և միոզինի ակտիվացումը կրերի ակտոմիոզին կոնյակեթով առաջացմանը, ինչը կնպաստի թումբոցիտներից ազրեգացիային նպաստող գործոնների ծերբազատմանը

ՖԱՐՍԱԿՈՂԻՆԵՏՏԻԿԱ. Աղրոքսոնը օգտագործում են տեղային, հազվադեպ ներքին ընդունման ծևով (տեղային ազդեցություն) և որոշ դեպքերում ներամաշկային (Ե/Յ) կամ միջմկանային (Մ/Յ) օրական 3-4 անգամ: Դեղապատրաստուկը կարելի է գուգորդել ամինակապրոնաթթվի, թումբինի, ինչպես նաև ոռտիմի, էտամզիլատի և անորի պատի թափանցելիությունը նվազեցնող այլ նյութերի հետ:

ԿԻՐԱՌՈՒՄ. Օգտագործում են պարենիփամատոզ և մազանոքային արյունահոսությունների ժամանակ (վճասվածմեր, նշկնմերի հեռացում, վիրահատության ժամանակ): Դեղապատրաստուկը նշանակում են նաև աղիքային արյունահոսությունների, նորածինների մելենայի, մաշկա-հեմոռագիկ համախտանիշով դրսորդվող թումբոցիտոպենիկ պուրպուրայի ժամանակ:

ԿՈՂԱՍՍԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. Անցանկալի է ֆեկտոներ բացահայտված չեն:

Ս Ե Ր Ո Շ Ո Ն Ի Ն

ՖԱՐՍԱԿՈՂԻՆԱՍՄԻԿԱ. Օգտագործում են միայն սերոտոնինի սինթետիկ դեղապատրաստուկները:

1) Սերոտոնինը խթանում է թումբոցիտների սերոտոնինային-2 (5-HT₂) ընկալիչները, ինչը բերում է ներքջային Ca^{2+} -ի քանակության բարձրացմանը (նայիր աղրոքսոնի Ca^{2+} -ի քանակության բարձրացման մեխանիզմը և դրա հետևանքները); 2) Սերոտոնինը խթանում է էնդորքելիալ 5-HT₂ ընկալիչները, ինչը

բերում է ենդոթելիալ բջիջների կծկման և մրանց միջև լուսանցքի մեծացման, որը կբերի ամորֆ թափանցելիության բարձրացմանը, հյուսվածքի ուրծնցմանը և ամորֆ սեղմանը; 3) Սերոստոնինը խթանում է անորի 5-ԻԴ, ընկալիչները, ինչը բերում է անորի սեղմանը:

ՖԱՐՍԱԿՈՒԽՆԵՏԻԿԱ. Նեղապատրաստուկր ներմուծում են ներերակային (մ/ե) կամ մ/մ: Ներքին ընդունման ծևով նշանակել չի կարելի, քանի որ նա ակտիվագերծվում է աղիների պատում տեղակայված հասուկ ՍՍՕ ֆերմենտով: Էկզոգեն ներմուծվող սերոստոնինը արագ օավթում և քայլայվում է ՍՍՕ և ԿՕՍ ֆերմենտմերով նաև այլ հյուսվածքներում: Այսպիսով, դեղապատրաստուկր 20-50%-ը վերածվում է 5-օրսիինորդացախարքի: Նեղը ուղեղ-արյունային պատմեշով չի բափանցում: Դեղի բոլոր նյութափինամակային արգասիքները դուրս են բերվում երիկամներով: Կրկնակի ներարկումները կարելի են անել 4 ժամից ոչ շուտ և օրական 4 անգամից ոչ ավել: Երիկամային հիվանդությունների ժամանակ դեղապատրաստուկր կումուլացիայի վտանգը կտրուկ ածում է, հատկապես, եթե հաշվի առնենք, որ դեղը ինքը առաջացնում է երիկամային կծկմերի անորմների կծկում, ոժվարեցնելով դեղի արտազատումը:

ԿԻՐԱՊՈՐՄ. Կիրառում են թրոմբոցիտոպենիամերի (Վերլիոֆի հիվանդություն, ցիտոստատիկմերի բնդումումից հետո և այլն) ֆոնի վրա նկատվող արյունահոսությունների ժամանակ:

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. Ն/ե ներմուծման ժամանակ կարող են առաջանալ թրոմբոֆերիտ, բրոնխաֆղություն, փորացավեր, փսխում, լուծ, զարկերակային հիպերտենզիա, գլխացավ, ցավեր սրտի շրջամում, դիուրեզի նվազում և այլն:

ԷՏԱՄՁԻԼԱՏ

ՖԱՐՍԱԿՈՒԽՆԱՍԻԿԱ. Էտամզիլատի (դիցինոն, ցիկլոնամիդ) ազդեցության մեխանիզմները հետևյալներն են: 1) անորմների դյուրաբեկության և թափանցելիության նվազումը, ինչը հետևամբ է հիալուրոնաթթվի պոլիմերիզացիայի ավելացման և, հետևաբար, անորի պատի մուկոպոլիսախարիդների քայլայման կանխանակ և բազալ թաղանթի անրապնդման; 2) պրոստացիկլինի էֆեկտների ընկճումը; 3) թրոմբոցիտների քանակության շատացումը, ինչը տեղի է ունենում ի հաշվի. ա) դեպոներից թրոմբոցիտների արտահոսքի; բ) մեզգակարուցիտներից թրոմբոցիտների առաջացնան խթանման; 4) թրոմբոցիտների ֆերմենտային ռեակցիաների խթանումը; 5) հյուսվածքային թրոմբոպլատինի առաջացնան արագացումը:

ՖԱՐՍԱԿՈՒԽՆԵՏԻԿԱ. Էտամզիլատը ներմուծում են մ/մ (էֆեկտը ի հայտ է գալիս 30-40 րոպե անց), մ/ե (էֆեկտը ի հայտ է գալիս 5-15 րոպե անց) և ներքին ընդունման ծևով: Օրգանիզմից դուրս է բերվում երիկամներով անփոփոխ վիճակում: Մոտավորապես 4 ժամ հետո դեղը լրիվ դուրս է գալիս օրգանիզմից: Նշանակում են օրը 3-4 անգամ:

ԿԻՐԱՊՈՐՄ. Օգտագործում են պարենիմատոզ և մազանոթային արյունահոսությունների ժամանակ, որոնց հիմքում ընկած են անգիո- և կապիյարոպաթիաները, կիրառում են նաև թրոմբոցիտների քանակության նվազման և նրանց ֆունկցիայի խանգարման հետ կապված երկրորդական արյունահոսությունների ժամանակ (հեմոռագիկ դիաբեզ, դիաբետիկ միկրոանգիոպաթիա, ներ- և հետվիրահատական արյունահոսություններ, թրոմբոցիտոպենիկ պուրպուրա և այլն):

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. գլխացավ և գլխապտույք:

Cα²⁺ ԴԵՂԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐ

Այս խմբին են պատկանում կալցիումի քլորիդը, կալցիումի գյուլկոնատը:

ՖԱՐՍԱԿՈՒԽՆԱՍԻԿԱ. Cα²⁺-իոնները մասնակցում են թրոմբոցիտների ազդեցիային և ածակցմանը, բացի այդ նրանք խթանում են թրոմբինին և ֆիբրինին: Այսպիսով, Cα²⁺-իոնները խթանում են և թրոմբոցիտար և ֆիբրինային թրոմբերի առաջացումը:

ՖԱՐՍԱԿՈՒԽՆԵՏԻԿԱ. Կալցիումի գյուլկոնատը ներմուծում են մ/ն, մ/ե և ներքին ընդունման ծևով ուտեղուց առաջ, մինչդեռ կալցիումի քլորիդը ներմուծում են միայն մ/ե (շատ դանդաղ) և ներքին ընդունման ծևով (ուտեղուց հետո): Մոտավորա-աղիքային ուղուց կենսամատչելիությունը ցածր է, քանի որ տեղափոխումը դրականացվում է հասուկ սպիտակուցի օգնությամբ: Նշանակում են օրական 3-4 անգամ:

ԿԻՐԱՊՈՐՄ. Օգտագործում են արյան պլազմայում Cα²⁺-ի քանակության նվազման հետ կապված արյունահոսությունների ժամանակ (Cα²⁺-ի ցածր քանակությամբ կամ նրանից գուրք ցիտրասային արյան և պլազմային փոխարինիչների մեջ քանակության փոխներարկումից հետո): Որոշ դեպքերում նշանակում են թրոմբոցիտոպաթիաների և թրոմբոցիտոպենիաների ժամանակ:

ԿՈՂԱՆԱԿԻ ԵՐԱՌԵԹԾՅՆԵՐ. Մարսողական ժանապարհով ներմուծման ժամանակ հնարավոր է ստամոքս-աղիքային ուղուց լորձարաղամբերի գրգռում, որը կարող է բերել դիսպեսամիկ երևույթների: Ն/ե ներմուծման ժամանակ հնարավոր է արյան ծնշման անկում: Ե/մ կամ մ/ն ներմուծումը գուգորդվում է ցավոտությամբ և փափուկ հյուսվածքների մեռուկացմամբ:

ՊՈՂԱԳՐԵՎԱԾՆԵՐԻ ԴԿՎԱՅՈՒԹՈՒՆԵՐԸ

1) նախատրամադրվածություն թրոմբոզներին; 2) արյան բարձր մակարդունակությամբ գուգորդվող հիվանդություններ; 3) սուր թրոմբոզներ:

2.2 ՍԱԿԱՐԴԻՉՆԵՐ

Այս խմբի ներկայացուցիչներն են թրոմբինը, ֆիբրինոգենը և վիտամին K-ի դեղապատրաստուկները:

ԹՐՈՍՔԻՆ և ՖԻԲՐԻՆՈԳԵՆ

ՖԱՐՍԱԿՈՒԽՆԱՍԻԿԱ. Թրոմբինի և ֆիբրինոգենի ազդեցության մեխանիզմներն են: 1) թրոմբինը և ֆիբրինոգենը նպաստում են ֆիբրին-պոլիմերի առաջացմանը: 2) Թրոմբինը կարող է խթանել

XIII գործոնը: 3) Թրոմբինը նպաստում է ազրեգացիայի գործոնների ծերագատմանը, իրավանելով թրոմբոցիտների հասուկ ընկալիչները (պրոագրեգանտային ակտիվություն):

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Թրոմբինը նշանակում են տեղային, ինհայացին և էնտերալ ծանապարհով: Էնտերալ ծանապարհով ընդունման համար ամպովի պարունակությունը լուծում են կամ նատրիումի քլորիդի հզուտմիկ լուծույթում, կամ էփիլոն-ամինոկապունաքլորաթրվի լուծույթում և օգտագործում օրական 3-4 անգամ: Թրոմբինի արտազատումը իրականացվում է հակաբրումբին III-ի ազդեցության տակ և ի շնորհիվ թրոմբոնոդուլինի հետ կոմպլեքսի առաջացման: Թրոմբոնոդուլինը նորմալ էնդոթելի մակերեսին գտնվող սպիտակուց է:

Ֆիրինոգենը նշանակում են տեղային և ճ/ե: Օգտագործումից առաջ ֆիրինոգենը լուծում են ռետրո ներարկումների համար նախատեսված հասուկ լուծույթում, նախապես տաքացնելով լուծույթը մինչև 25-35°C: Դեղապատրաստուկը ներարկում են ֆիլտրով օժտված ներմուծման համակարգի միջոցով օրական 1 անգամ:

ԿԻՐԱՊՈՐՄ. Թրոմբինը նշանակում են. 1) տեղային՝ մակերեսային արյունահոսությունների ժամանակ; 2) նարսողական ծանապարհով. ստամոքսային արյունահոսությունների ժամանակ; 3) ինհայացիոն՝ շնչուղիների արյունահոսության ժամանակ:

ԿՈՂԱՆԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐ. Թրոմբինի արյունահոսքում հայտնվելը պետք է բացառել, քանի որ կառաջանա տարածված մակարդում:

Ֆիրինոգենը նշանակում են. 1) տեղային՝ արյունահոսությունների ժամանակ ֆիրինային թիթեղաժապավենների տեսքով; 2) իիպո- կամ աֆիրինոգեննեմիայով բնորոշվող տարրեր վիճակների ժամանակ (ընկերքի վաղաժամ շերտազատում); II-III աստիճանի ՏՆՄ-համախտամիշ; որոշ օրգանների վրա կատարած վիրահատությունից հետո՝ շավանակագեղձ, թոքեր և այլն, որոնց հյուսվածքները հարուստ են նախախթանիչներով; Ֆիրինոլիտիկ դեղերի գերդոզավորումը; կոնսերվացված արյան և պլազմայի փոխարինողների նաև վիրահատումը; 3) հետոֆիլիա A-ի ժամանակ, քանի որ կան հակահեմոֆիլային գլորուլին A պարունակող ֆիրինոգենի դեղապատրաստուկներ (արյան մակարդման համակարգի VIII գործոն):

ՎԻՏԱՍԻՆ Կ ԴԵՂԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԸ

Հիմնական դեղապատրաստուկն է հանդիսանում վիկասոլը (ֆիտոմենադիոնը): Տարբերակում են բուսական սննդի հետ օրգանիզմ ներմուծվող վիտամին K₁ (ֆիլոխինոն) և կենդանական ծագում ունեցող մթերքներում պարունակվող վիտաման K₂, որը կարող է նաև առաջանալ աղիքային որոշ մանրէներով: Ի տարբերություն բնական ծագում ունեցող վիտամին K₁-ից (տրանս-միացություն) ֆիտոմենադիոնը հանդիսանում է սինթետիկ դեղապատրաստուկ և ռացեմիկ միացություն (տրանս- և ցիս-իզոմերների խառնուրդ), բայց իր կենսաբանական ակտիվությամբ նա նման է բնական վիտամին K₁-ին: Վիկասոլը վիտամին K₁-ի սինթետիկ համանմանակն է, նա ջրալույթ դեղապատրաստուկ է և համարվում է վիտամին K₃ (մենադիոն):

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԱՍՄԻԿԱ. Վիտամին K-ի դեղապատրաստուկները իրենց էֆեկտը դրսևորում են միայն օրգանիզմում; նրանք *in vitro* պայմաններում չեն ազդում: Վիտամին K-ն օրգանիզմում գույլություն ունի հիդրոխինոնի, էպոքսիդի և խինոնի տեսքով, որոնք նշտապես ծևափոխվում են մեկ ծկից մյուսը նշված հաջորդականությամբ: Դիդրոխինոնային ծկից էպոքսիդայինի վերափոխման ժամանակ վիտամինը խթանում է հասուկ կարտրոքսիլազամ, որը կարորոքսիլացնում է տարրեր սպիտակուցներում պարունակվող գուտամինաթրվի մնացորդները: Դրանից հետո այդ սպիտակուցները ակտիվանում են: Այսպես է տեղի ունենում մակարդման համակարգի գործոնների խթանումը (II, VII, IX և X), ինչպես նաև հակամակարդիչ հատկություններով օժտված C և S սպիտակուցների և արյան պլազմայում, աղիների պատում, երիկամային խողովակներում, ուկորներում (օստեոկալցին) և այլ տեղերում կազմում սպիտակուցների (Կ4Մ) խթանումը:

Վիտամին K-ի բացակայության պայմաններում մակարդման համակարգի վերոնշված սպիտակուցները չեն ակտիվանում, դրանք այսպես կոչված ակարբոքսի II, VII, IX գործոններն են: Ակարբոքսի II-ը նույնիսկ օժտված է պրոթրոմբինի հանդեպ ներհակորդային հատկությամբ (նա ստացել է հետևյալ անվանումը *protein induced vitamin K absence* կամ PIVKA II): Ակտիվացված C և S սպիտակուցները բրոմոցիտների և էնդոթելի մակերեսների վրա ֆուֆոլիպիդների հետ փոխազդելով արագ ակտիվացներում են *Va* և *VIIla* գործոնները, դրանով իսկ ընկենուով արյան մակարդումը: Միևնույն ժամանակ նրանք պաշտում են պլազմինօգենի հյուսվածքային ակտիվատորի ընկողությունը, որի ծերազատումը (պլազմինօգենի հյուսվածքային ակտիվատորի) էնդոթելից մեծանումն է, ինչը նպաստում է ֆիբրինոլիզիմ: Սակայն, վիտամին K-ի հակամակարդիչ հատկությունները սովորաբար չեն արտահայտվում: Բայց և այնպես վիտամին K-ի ներհակորդները նշանակելիս (նեոդիկումարին և այլն) վերոնշված մեխանիզմները կարող են բացատրել որոշ կոլմանակի էֆեկտների զարգացումը:

Վիտամին K-ն օժտված է հակահիպօրսանու ակտիվությամբ, նպաստելով շնչական շղթայուն NADH-ից դեպի CoQ ջրածնի տրանսպորտին, շրջանցելով ֆլավոպրոտեին I-ը (NADH-դեհիդրոգենազա): Դրանով վիտամին K-ն միտոքոնուրիումներում հեշտացնում է ԱԵՖ-ի սինթեզը: Դայտնի է նաև, որ վիտամին K-ի ազդեցության տակ մեծանում է ալբումինների, միոֆիբրիլյար սպիտակուցների, անոթների էլաստիկության գործոնի սինթեզը, սակայն այդ գործըմբացների մեխանիզմները առայժմ պարզաբանված չեն:

ՖԱՐՍԱԿՈՎԻՆԵՏԻԿԱ. Վիկասոլը ինքը չի առաջացնում էֆեկտ, այլ յարդում նրանից առաջացած վիտամիններ K₁ և K₂-ը: Դա է պատճառը, որ մակարդման բարձրացնումը նրա ներմուծումից հետո դանդաղ է զարգանում: Ֆիտոմենադիոնը նշանակում են մարսողական ծանապարհով ուտելուց 30 րոպե անց, իսկ վիկասոլը՝ մարսողական, ճ/ե, մ/մ ծանապարհով:

ԿԻՐԱՊՈՒՄ. Վիտամին K-ի դեղապատրաստուկմերը նշանակում են. 1) պոտֆիլակտիկ նպատակով հղիության վերջին 2 շաբաթվա ընթացքում (սակայն նա դժվար է թափանցում ընկերով), սանող մայրերին կաթում վիտամին K-ի քանակությունը շատացնելու նպատակով, ինչպես նաև երեխաներին ծննվելուց անմիջապես հետո (եթե չկա դեղնախտ); 2) առաջին օրերի ընթացքում ի հայտ եկող նորածինների վաղ հեմոռագիկ հիվանդության ժամանակ: Այս կարող է լինել իդիոպաթիկ կամ էլ ներդիկուլարիտիկ, ասպիրինի, ֆենորադրիտալի, ոդֆենինի, ոդֆանափիցինը հզոնիագիրի հետ միասին հղիության ժամանակ ընդունելու հետևանք; 3) 2-5 օրը զարգացող նորածինների հեմոռագիկ հիվանդության դասական ձևի ժամանակ: Այդ հիվանդությունը կարող է երեխայի կամ մոր ոչ ռացիոնալ սննդում, յարդի և լեղուղիների հիվանդության, աղիմերի դիրբակտերիոզի, իմշապես նաև ամհասուրյան հետևանք լինել; 4) նորածինների հեմոռագիկ հիվանդության ուշ ձևի ժամանակ, որը ի հայտ է գալիս 1 ամսեկանից մեծ երեխաների մոտ: Այդ հիվանդությունը կարող է իդիոպաթիկ լինել կամ էլ սննդում վիտամինի անհամարժեք քանակության, երեխայի մոտ երկարատև լուծի, մուկովիսցիդրոզի, լեղուղիների աստրեզիայի, ցելիակիայի, հեպատիտի, անուլղակի հակամակարդիչների, հակարդիտիկմերի նշանական հետևանք լինել; 5) նախա- և հետվրահատական ժամանակահատվածում կոնսերվացված արյան փոխմերակման ավարտից հետո; 6) կեղծ հեմոֆիլիայի ժամանակ (պրոթրոմբին՝ II գործոնի և պրոկոնվերտին՝ VII գործոնի բնածին պակաս); 7) վիտամին K-ի ներհակորդների ընդունումից առաջացած մկանային թուլության, աղիների աստոնիայի, սրտային աճրավարարության ժամանակ; 8) ռախիտի ժամանակ:

ԿՈՂՄՍԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐԸ. 1) Վիկասուլը բարձր դեղաչափերով ի շնորհիվ իր օքսիդացմող հատկության, կարող է առաջացնել էրիթրոցիտների հեմոլիզ կամ արյան մեջ մեթենոգլոբինի առաջացում: Չատկապես մեծ է բարդությունների առաջացման վտանգը էրիթրոցիտներում վերականգնող ֆերմենտների պակասով հիվանդների (գլուկոզ-6-ֆոսֆատեհիդրօգենազ, գլուտափինուերուլուտազ) և նորածինների մոտ, քանի որ նրանց մոտ է նկատվում յուրահատուկ, հեշտ օքսիդացվող ֆետալ հեմոգլոբինը, մեթենոգլոբինուերուլուտազայի պակասը, ինչպես նաև ների նյութափոխանակության դանդաղ ընթացքը: Վիկասուլը հակացուցված է հեմոլիտիկ դեղնախտով տարապար հիվանդներին, որոնց մոտ առանց այդ էլ էրիթրոցիտները ներարկված են հեմոլիզի; 2) Վիտամին K-ի դեղապատրաստուկմերը առաջացնում են թրոմբոցիտների փունկցիայի խանգարում: Այդ իսկ պատճառով նրանք հակացուցված են թրոմբոցիտների փունկցիայով կամ թրոմբոցիտոպաթիայով տարապար հիվանդների մոտ:

ՄԱԿԱՐԴԻՉՆԵՐԻ ՀԱԿԱՅՈՒԹՈՒՄՆԵՐԸ

1) արյան բարձր մակարդունակություն ; 2) թրոմբոէմբոլիաներ (վիտամին Կ դեղապատրաստուկմեր); 3) թրոմբոզներ; 4) նախաթրոմբոտիկ վիճակներ (ֆիբրինոգեն)

2.3 ՀԱԿԱՖԻՐԻՆՍՈԼԻՏԻԿՆԵՐԸ

ԷՊՄԻԼՈՆ - ՍՄԻՆՈԿԱՊՐՈՆ ԱԹԹՈՒ

ՖԱՐՄԱԿՈԴԻԽԱՍԻՒԿԱ. Դեղապատրաստուկը համդիսանում է լիզին ամինաթթվի ածանցյալը: Ֆիբրինոգենի և ֆիբրինի մոլեկուլներում պարունակվում է լիզին, որի հետ էլ փոխազդում են պլազմինոգենի և պլազմինի ակտիվ կենտրոնները, հետագայում ենթարկելով այդ սպիտակուցները լիզիսի: Դեղապատրաստուկը, փոխազդելով պլազմինոգենի և պլազմինի այդ ակտիվ կենտրոնների հետ, վերացնում է նրանց ակտիվությունը, պաշտպանելով ֆիբրինի մոլեկուլը և նրանց բաղկացած թրոմբը: Նա ունի նաև պլազմինոգենի խթանիչի հետ կապելու հատկություն, որից հետո վերջինս ակտիվացերծվում է: Բացի այդ նա խթանում է թրոմբոցիտոպելզը և բարձրացնում թրոմբոցիտային ընկալիչների գգայունությունը բնական պրոագրեգանտների համենք (թրոմբինի, կոլագենի, թրոմբոքսան Ա2-ի և այլն): Սակայն բարձր դեղաչափերով այդ դեղապատրաստուկը առաջացնում է հակառակ՝ դեղագրեգացիոն էֆեկտ: Էկսիլոն-ամինոկապրոնաքրուն ֆիբրինոլիզի համակարգի միջոցով ընկծում է լիզինների առաջացումը, ինչով և պայմանավորվում է նրա միջին արտահայտվածության դեսենսիբիլիզացնող և հակարդորոքային ակտիվությունը: Նա օժնված է նաև կոմպլեմենտի համակարգը ընկծելու հատկությամբ, ինչը բացատրում է նրա ինունածնշչ ազդեցությունը: Վերջապես, այդ դեղապատրաստուկը կարող է խթանել յարող վնասազերծող ֆունկցիան և օժնված է հակավիրուսային ազրեցությամբ:

ՖԱՐՄԱԿՈԴԻԽՏԻԿԱ. Դեղապատրաստուկը ներմուծում են ներկայացների (այլապես կզարգանա թրոմբոզ) կամ էլ նշանակում են մարտողական ճանապարհով, նախապես լուծելով փոշին բաղդրում կամ էլ այդ ջուրը խնում են փոշին ընդունելուց հետո:

ԿԻՐԱՊՈՒՄ. 1) արյան և հյուսվածքների առաջային ֆիբրինոլիտիկ ակտիվության բարձրացումով և հիպոֆիբրինոգենների այլունակությունների ժամանակ; 2) վիրարուժուկան միջամտությունների ժամանակ նկատվող արյունահոսությունների կանխան նպատակով, առաջին հերթին ֆիբրինոլիզի հյուսվածքային խթանիչներով հարուստ օրգանների վրա կատարվող վիրարուժական միջամտությունների ժամանակ; 3) ֆիբրինոլիզիկ դեղերի գերդոզավորման և արյան զանգվածային փոխմերակման ժամանակ; 4) իմունային կոնվերսների առաջացումով զուգորդվող հիվանդությունների (գլումերոլուների) և կինհիային համակարգի ակտիվության բարձրացման ժամանակ (սրավմատիկ, հեմոռագիկ կամ սեպտիկ շոկ, այրվածք, մենինգիտ և այլն):

ԿՈՂՄՍԱԿԻ ԷՖԵԿՏՆԵՐԸ. Ննարավոր է հետևյալ կողմնակի էֆեկտների զարգացումը. 1) ալերգիկ ռեակցիաներ՝ վերիմ շնչուղիների կատարի, մաշկային ցանավորման, աչքերի կարմրության, քթի փակվածության տեսքով; 2) դիսաբեսիկ խանգարումներ (սրտխառնոց, ցավ էպիգաստրիալ շրջանում, լուծի); 3) գլխապտույտ, զնգոց ականջներում, արյան ճնշման օրոտասատիկ տատանումներ, հազվասրտություն, առիթմիաներ (արագ ներմուծման ժամանակ); 4) թրոմբոզներ, էմբռիաներ, իսկ կումոնուլացիայի ժամանակ՝ արյունահոսություններ; 5) շատ հազվադեպ կարող է զարգանալ միոպարիա

Դակացուցված են ՂՆՄ-ի ամախտանիշի ժամանակ:

Դեղապատրաստուկը իր կլինիկա-ֆարմակոլագիական բնութագրով մոտ է կանգնած պարապմինաքենզոյաթթվին (ամբեն), սակայն վերջինս 3-7 անգամ ավելի ակտիվ է: Դարկավոր է նշել, որ այդ դեղապատրաստուկով բուժնան ժամանակ առաջացող թրոմբը գրեթե ամլուժելի է (չի ենթարկվում լիգիսի):

ՏՐԱՆԵՔՍԱՍԱԹՈՒՆ համարվում է ամինոկապրոնաթթվի համանմանը և օժտված է նույնատիպ հատկություններով: Ներմուծվում է մարտողական ճանապարհով:

ԴԱԿԱՑԻՔԻ ԽՈՒԹԻԿՆԵՐԻ ԴԱԿԱՑՈՒՅՈՒՆՆԵՐԸ

1) նախատրամադրվածություն թրոմբոզներին և էմբոլիաներին; 2) ֆունկցիայի խանգարումներով ընթացող երիկամների հիվանդություններ; 3) հղիություն; 4) ուղեղի արյան շրջանառության խանգարումներ (զգուշությամբ):